





Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԸՕԳԸՅԷՆ, ԲԸՆԸՍԻՐԸԿԸՆ, ԳԻԸԳԻՏԱԿԸՆ
ԵՒ ԲԸԳԸԲԸԿԸՆ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ՇՐԶԱՆ ՄԻԸՄԵԸՅ



ՅԵՐՈՒՍԸԳԼԷՄ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
1872



ԵՕԹՆԵՐՈՐԻ ՏՐԻՒ
ԹԻՒ 10

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՀՈԿՏԵՄԲԵՐ 31
1872

ԵՉԳԱՅԻՆ ԻՆՆԱԾԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

ԽՐԵՒ ԱՌԱՋԻՆ ԽՍՐԻՍՏՈՍ ԸՆԿԵՐՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ (*)

Քան որ ազգի մը կամ ժողովրդի գեան մը յառաջագիծն թեան, բարեբաւութեան եւ խաղաղութեան հիմունքը բարոյական կրթութեան վերայ հաստատուած չեն, կարելի չէ որ հաստատուն, կատարեալ և տեւական լինին իւր սրով հետեւ սրաի դառն ցաւով կրտեանեմք՝ որ մեր ազգային բուժանդակ կեանքն զուրկ է սոյն օրինակ կրթութեանէ, անոր համար ոչ իրեն Սահմանադրութիւն ունենալը, ոչ լրագրութիւն և ոչ շատ մը դպրոցներ ունենալը իրեն հիմնական և իրական օգուտ մը կ'առնեն. հետեւաբար այս դրութեամբ ժողովրդեան շարժում

ներն աննպատակ են : Յիրաւի Սահմանադրութիւն ունենալ, սահմանադրական օրինոք կառավարիլը լաւ բան է . ինչպէս որ իւրօրական բողոք մեծ ազգերն ընդունած են սոյն կառավարական ձեւն ու եղանակը : Սակայն պէտք է գիտնանք՝ որ Սահմանադրութեան հոգին գործն է . երբ գործ չը կայ, Սահմանադրութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ աննպատակ և անկենդան օրէնք մի, որոյ կապուողներն աւելի կ'անդամաւորին, քան թէ կը կազմակերպին, աւելի կը յետադիմեն, քան թէ կը յառաջագիծեն . վասն զի ազգաց շինութեան տարրը և հոգին գործունէութիւնն է, ուստի երբ ազգ մի ինքզինքը

(*) Հարունախօսութիւնը, տես թիւ 9 :

անգործութեան դատապարտած է կամաւ , բնականաբար ազան կամ անազան կը քայքայի եւ ոչնչութեան մէջ կը գահավիժի :

Այսօր գրեթէ տասն և երկու տարի է՝ որ մեր ազգը Սահմանադրութիւն ունեցած է , սակայն երբ լուրջ նկատողութիւն մի առնենք , պիտի տեսնեմք՝ որ Սահմանադրութեան տրամադրութեանց նկատմամբ ոչ թէ տասը և երկու տարուան արդիւնք կամ գործ , այլ տասն և երկու օրուան գործ հազիւ կայ : Արդ՝ ըսել է ազգը լի աշուտան կապուելով , միայն անունին խարուելով՝ տասն և երկու տարուան մեծ և անդարմանելի կորուստ մի ըրած է : Ի՞նչ բանի արդիւնք է այս կորուստը . ինչի՞ հետեւութիւն է այս վնասառիթ անգործութիւնը . անշուշտ բարոյական կրթութեան պակասութեան իրական հետեւութիւնն է . վասըն զի երբ կանխաւ ճանչնար ճշմարիտ յառաջադիմութեան ի՞նչ լինելը , երբէք օդաբաղն խօսից և նորամուտ ձայներու չը պիտի հաւատար և խօսքը աւելի սիրէր քան թէ գործը : Արբ անձնիւր անհատ ճանչնար իւր պարտքը , ճանչնար ազգին շինութեան համար իւր կոչումը . այն ժամանակ միայն Սահմանադրութիւնը ինչպէս այլոց , նոյնպէս և մեզ յառաջադիմութեան պատճառ պիտի լինէր : Իայց որովհետև շատ քիչերն են իրենց պաշտքըն ու կոչումը ճանչցողները , այս պատճառաւ ցարդ անգործադրելի մընայ Սահմանադրութիւնը և թերեւս պիտի մնայ :

Տասն և երկու տարի է , ասացինք՝ որ սահմանադրական անունն առած է մեր ազգը իւր վրան . սակայն տակաւին նոր կը լսեմք , որ Արդ . Վարչութիւնը Գաւառները հարկեցուցիչ հրահանգներ կը զրկէ Սահմանադրու-

թեան գործադրութեան համար , նոր կը լսեմք թէ՛ այս ինչ գաւառին համար այս ինչ գործադիրներն որոշուեցան : Չեմք ուզեր այս առթիւ նշանակել թէ՛ ցարդ եղած անհոգութեանց և զանցառութեանց մասին ո՞վ մեղապարտ է . որովհետև մեր նպատակէն արտաքոյ է . այլ այսչափը միայն կ'ասեմք թէ՛ ի՞նչ զարմանալի բան է , որ գաւառներու մէջ Սահմանադրութեան միջնական գործադրութեան համար պարտաւորիչ հրահանգներ կը զրկուին Խրիմեանի Պատրիարքութեան օրով . շատ տեղերու համար յատուկ գործադիր պաշտօնեաներ կ'որոշուին և կը զրկուին դարձեալ Խրիմեանի օրով . մինչդեռ ոմանք , մանաւանդ զիրենք ազգին ողջամիտ մասը կարծեցընող կարգ մը մարդիկ ՚ի վերայ տանեաց կը քարոզեն անընդհատ թէ՛ Խրիմեանը հակասահմանադրական է , թէ՛ Սահմանադրութիւնը կուզէ ջնջել , որպէս զի միապետաբար գործէ : Արդեօք այս կարգ մը մարդիկը երբ այս ամենը կը լսեն , մանաւանդ երբ կը տեսնեն , չէ՞ն ամաչեր իրենց հրապարակական ստութեան վերայ և կամ գոնէ այս մասին իրենց խղճին խայթը չէ՞ն զգար :

Սենք Խրիմեանի գործոց և այս կարգի մարդկանց խօսից մէջ եղած հակասութիւնն երկու կերպով կը մեկնեմք . այսինքն կամ նոքա Սահմանադրութեան ոգին տակաւին չեն իմացած և չեն ըմբռնած թէ՛ Սահմանադրութիւնը գործով Սահմանադրութիւն է ո՞չ թէ խօսքով : Այլ թէ մեր սոյն կարծիքը ստոյգ է , մեզ համար նոքա յետին աստիճանի ազէաներ եւ յիմարներ են . և կամ այս ամենը գիտնալով հանդերձ կուզեն զԽրիմեան տապալել , կուզեն գահընկեց առնել . որպէս զի Սահմանադրութիւնը իւր տասն և մէկ ամեայ ամուլ վիճակին

մատնեն . իսկ եթէ վերջին կարծիքս ստոյգ է քան թէ առաջինը , պարզապէս դժբա Սահմանադրութեան ուխտեալ թշնամիներն են , հետեւաբար ամբողջ ազգին վատ դարանակալներն . վասն զի ինչ կը նշանակէ Սահմանադրութիւնը գործադրութեան մէջ գնող և կամ գոնէ այս մասին աշխատող խրիմեանը վատահամբաւել թէ՛ կուզէ ազգային Սահմանադրութիւնը տապալել . թողունք այս և դառնանք մեր բուն խօսքին :

Թէպէտ և ներկայ Վարչութիւնը տղաւ հրամաններ և հրահանգներ կը զըլէ գաւառները ՚ի գործադրութիւն Սահմանադրութեան . թէպէտ և յատուկ պաշտօնեաներ կը զըլէ այս մասին . այսու ամենայնիւ մեր չեմք հաւատար՝ որ կատարելապէս ՚ի գործ դրուի Սահմանադրութիւնը գաւառներուն մէջ . կը թերահաւատիմք այս մասին . և ահա պատճառը . նախ՝ որ գաւառացին Սահմանադրութե մասին շատ տգէտ է . թողունք ամենը . թերեւս շատ տեղերու մէջ չեն հասկանար , թէ՛ ինչ է քուէն և քուէարկութիւնը . երկրորդ՝ չեմք յուսար , որ նոքա ճշտապէս իմանան ընտրողական պարտքն ու իրաւունքը՝ որք Սահմանադրութեան բուն ոգին են : Բայտ մեզ զարմանալի և մեղադրելի չէ գաւառացւոյն այս մասին ունեցած տըգիտութիւնը . քանի որ մի և նոյն ասածներս Պօլսոյ մէջ անգամ լաւ հասկացողներ իսիստ քիչ կը գտնուին . վասն զի Պօլսոյ մէջ՝ որ գաւառաց կեդրոնն համարուած է , շատ անգամ տեսած եմք և այժմ կը լսեմք թէ ինչ եղանակաւ կը կատարուին ընտրութիւնք . թէ անձնասէր անձինք ինչ պժգալի դերեր կը խաղան հասարակութեան քուէն իրենց հաճոյից և կրից կատարման գործի դարձնելով : Երբ քուէարկու-

թեան մէջ , որ պէտք է ամենայն ուղղութեամբ և ճշմարտութեամբ լինի , նենգութիւն և խարդախութիւն մուտ կը գտնեն դաս մը մարդկան ձեռքով , այլ եւս Սահմանադրութիւնը ինչ ագուտ կարող է առնել . մի թէ Սահմանադրութիւնը մարդկանց ուղղասիրութիւն կուսուցանէ , թէ չէ մարդիկ ինքնին պէտք է ուղղասէր լինին . քանի որ մարդիկ ճշմարտութենէն աւելի նենգութիւնը կը սիրեն . ինչպէս կարելի է , որ Սահմանադրութիւնը յառաջադիմութեան պատճառ լինի . վասն զի Սահմանադրութիւնը ինչպէս վերեւն ասացինք ինքն ըստ ինքեան անկենդան օրէնք մ' է . երբ ՚ի լաւն գործ դրուի շահաւէտ և օգտակար արդիւնքներ յառաջ կը բերէ . իսկ ընդհակառակն երբ վատ և գէշ մարդկան ձեռքը խաղալիք դառնայ , աւելի չար և վնասակար հետեւանքներ կուենայ : Աւրեմն Սահմանադրութիւնը ինքնին յառաջադիմութիւն չք ճնիր , այլ մարդն է որ զայն ՚ի լաւն գործ դընելով՝ կը յառաջադիմէ . արդ՝ քանի որ Սահմանադրութեան սգւոյն համաձայն մարդ չը լինի , Սահմանադրութիւնը ոչ ինչ է :

Եւ յա թողունք . մի թէ ուրիշ պարագաներու մէջ Սահմանադրութիւնը օրինաւորապէս ՚ի գործ դրուած է . մի թէ ժողովրդեան պարտքն ու իրաւունքը միմիայն ընտրութեան մասնակցիլ է . մի թէ ընտրելոյն պարտքն ու իրաւունքն է ընտրուիլ և ստանձնել այն պաշտօնը , յոր ժողովրդեան քուէն կը կոչէ զինքն : Եւ յա չէ միայն , ե թէ հասարակութիւնը այս չափը միայն իրեն պարտք և իրաւունք ձանձցած և ըմբռնած է , շատ կը սխալի . նոյնպէս և ընտրեալք . վասն զի ընտրութեանէն յետոյ ժողովուրդը ամենամեծ իրաւունքը մի և ս ունի , այն է համարաւորութեան

իրաւունքը, նմանապէս և ընտրելով՝
 ընտրուելէն զինի մեծ պարտք մի եւս
 ունին առ ընտրողը, այն է համարա-
 տուութեան պարտքը, զոր մինչև ցայ-
 սօր ոչ այնչափ նկատողութեան սու-
 նուած և ոչ այնչափ կարեւորութիւն
 տրուած է այս մասին, և ահա այս
 անձանաչողութիւնն է պատճառ թա-
 ղահան այնչափ խռովութեանց եւ
 յուզմանց, այս է պատճառ, թաղահան
 խորհրդոց շատ անգամ կազմութիւնը
 չը լսուած, լուծու մը կը լսուի. վասն
 զի թաղեցին ընտրելով զթաղահան
 խորհուրդը, իւր պարտաւորութիւնը
 ըիւր ՚ի գործ դրած կը համարի. այնու-
 հետեւ բնաւ չը հսկեր նորա գործոց
 և ընթացից վերայ. իրբեւ տէր չըսու
 հանջեր անկէ իւր գործոց համարը.
 այս չննելէն զատ իւր ընթացքովն,
 կամ աւելի ճիշտ է ասել իւր տգիտու-
 թեամբն նորա իշխանական դիրք մը կը
 տայ, որով պաշտօնեայն տէր կը լինի.
 իսկ տէրը հպատակ: Այնուհետեւ
 թաղական խորհուրդը անխափ իշխա-
 նութիւն մի համարելով ինքզինքը, ոչ
 համարատուութիւն օրէնքը կը ձանձնայ,
 որ իւր պարտքն է և ոչ թաղեցւոյն
 հսկողութիւնը կամ միջամտութիւնը
 կ'ընդունի իւր գործոց մէջ, կը գործէ
 ամեն բան իւր ուղածին պէս և շատ
 անգամ ՚ի վնաս թաղեցւոյն: Այլ
 թաղեցին ամեն բան ըլլալէն վերջը
 յանկարծ կը զարթնու և իւր իրա-
 ւունքը կուզէ ՚ի գործ դնել, այսինքն
 կը սկսի համար պահանջել. այլ եւս
 հասարակութեան արգար և իրաւացի
 պահանջը ծանր և խորք կը թուի թա-
 ղահան խորհրդոյն. ուստի կը մերժէ
 նորա իրաւունքը, իւր կարծեցեալ իշ-
 խանական գիրքովն կը հարուածէ ըզ-
 շասարակութիւնը և ահա ասկէց կը
 ծագի թաղականաց և թաղեցւոց մէջ
 անվերջ վէճն ու յուզումը:

Համարատուութեան և համարա-
 տուութիւն օրէնքը՝ որ Սահմանադրու-
 թեան կարեւոր և էական մասն է, չը
 յարգելով՝ Սահմանադրու թիւնը բը-
 նաւ յառաջ չը քայլեր և սասոր համար
 է, որ մեր ազգային իւր սահմանադ-
 րապէս կազմեալ ամեն ժողովներն
 կամ խորհուրդներն ամուլ չիճակ մի
 ունին: () Երկնակի աղագաւ գրեթէ
 ամեն տարի նոր Աստուծանական խոր-
 հուրդ կը կազմուի. տարին լրա-
 ցած կամ ոչ, յանկարծ կը լուծուի,
 նորա տեղ ուրիշ մի կը կազմուի: Բո-
 մեզ այնչափ հոգ չէ և ոչ այնչափ վը-
 նասահար սոյն դրութիւնը, եթէ նա-
 բակազմ խորհուրդը իւր նախորդին
 սկսածն շարունակէ. սակայն այսպէս
 չննել, այլ իւր նախորդին միամեայ
 աշխատութեան յարգ և արժէք չըտա-
 լով նոր գործի կը սկսի, որով իրաւունք
 կը տայ իւր յաջորդին, որ իրեն նկատ-
 մամբ մի և նոյն ընթացքը բռնէ, այս-
 ինքն իւր միամեայ աշխատութիւնը
 և քրտինքը մէկ վայրկեանի մէջ փճայնէ:
 Այսպէս իւր նախորդին չափ կամ կը
 գործէ և կամ չը գործեր ինքն եւս կը
 լուծուի. կը գայ իրեն տեղը ուրիշ մը
 նոր գործի սկսելով հազիւ իւր նախոր-
 դին հասած տեղը կը հասնի, նարէն կը
 ցրուի և այսպէս շարունակաբար. ու
 բով կը տեսնեմք Արարչական այս ճիւ-
 ղին տխուր ամուլութիւնը. այսպէս են
 նա և Տնտեսական, Արտնական, Բա-
 տատանական, Անօրէից և այլն խոր-
 հուրդներն. հետեւաբար հասարա-
 կութիւնն եւս տեսնելով Սահմանա-
 դրութեան ապարդիւն վիճակը, այլ
 եւս կը տաղտկանայ, կը զգուի Սահ-
 մանադրութեանէն, կը խրոչի իրբեւ
 վնասակար օրէնքէ մի, որով առաւել
 կը դժուարանայ սոյն օրինաց գործա-
 դրութիւնը Ազգին մէջ:

Արեւսփոխանական Եղբայր՝ որ Աջ

գին ամենէն գերադոյն ժողովն է , երբ լըջմտաբար դիտենք , պիտի տեսնեմք , որ մի և նոյն զեղծմանց ենթակայ է : Գաւառացին կամ Պօլսյ մէկ թաղեցին կ'ընտրէ իւր Արեւսփոխանը , լիազօր իշխանութիւն կը տայ իւր իրաւանց պաշտպանութեան մասին , այլ սակայն կը մոռնայ յիշել անդամ թէ , ինքն համարուու է իսկ նա համարուու : Բաց յայտմանէ , երբեմն ևս չարոջտը կը սխալի իւր ընտրութեան մէջ , փոխանակ արժանաւորին տալու իւր քուէն , անարժանին կը տայ , որ կամ բնու խօսիլ չը գիտեր , և կամ բնու չաէլ չը գիտեր , և իւր կամքէն դուրս բնու օրէնք չը ճանաչէր , որով ընտրեալ երեսփոխանք փոխանակ առ գին իրաւանց և բարեւոյն երեսփոխանն ու պաշտպանը վնեւրու , իրենց անձին երեսփոխանն և իրենց կամաց ու հաճոյց պաշտպանն ու ատոյեանը կը լինին :

Մեր այս տողերը գրելով նորատակ չեմք բռնած արդի երեսփոխանական ժողովն մեղադրել և ազգին առջեւ մեղադարա ներկայացնել , քան լիցի վասն զի չեմք կարող ասել թէ՛ Արեւսփոխանաց ամենն ալ իրենց վսեմ կոչման և պարտուց անհարազատ են , չեմք կարող ասել թէ՛ ամենն և ևս իրենց անձին երեսփոխան են , քան թէ Ազգին , չեմք կարող ասել թէ բոլոր երեսփոխան էֆէնտիներն իրենց կամաց և հաճոյց պաշտպանն են , քան թէ Ազգին իրաւանց , որովհետեւ կան անշուշտ Ազգին բարին , Ազգին օգուտը և յաս աջադիմութիւնը մտածող եւ խորհող երեսփոխաններ , այսու ամենայնիւ չենք կարող ասել , թէ չը կան նաև այնպիսիներ , որք իրենց կոչումն իրենց նուիրական պարտքն ու պարտաւորութիւնը խսպառ մոռնալով կը զոհեն ամբողջ Արեւսփոխանութեան ,

կամ աւելի ճիշդ է ասել , ամբողջ Ազգին անգին ժամբըր միմիայն իրենց տրամաբանութիւնն ու փիլիսոփայութիւնը ցուցնելու համար . Ազգին կենսական խնդիրը իրենց կրից զոհ տալով՝ հասարակութեան վտահուութիւնը չարաչար ՚ի գործ կը դնեն :

Քանի՛ քանի՛ օրինաւոր և երկար ժամանակէ ՚ի վեր յուզուած խնդիրներ կան , որ անըւծանելի մնացած են Քանի՛ քանի՛ ունայն և անօգուտ խորհրներ երևան ելած են ոմանց երեսփոխանաց հնարադիտութեամբ : Ինչօգուտ պիտի քողէ երեսփոխանութիւնը Ասթղիկոսական կոնգրակաց և յորաբերութեանց տարապարտ խորհրներն վիճաբանութեան ատեանն հանելով : Ո՛վ չը գիտէ , որ սոյնօրինակ խնդիրներու տակ նենդութեան և շահամոլութեան կիրքեր կան ծածկուած : Ո՛վ չը գիտէ , որ այսպիսի փառամոլական խնդրոց յուզումն առաւել երկարաւիտութեան և խռովութեան դուռն կը բանան , քան թէ միութեան և ազգաշինութեան : Ինչո՞ւ ազգային դատարակութեան խնդիրն սոյնպիսի ջերմ վիճաբանութեան առարկայ չը դառնար Արեւսփոխանական ժողովոյ մէջ : Ինչո՞ւ ընդհանուր խնդիրներն միշտ մոռացութեան մէջ կը մնան եւ անձնական շահուց ու փառամոլութեան վերաբերեալ խնդիրներ օր աւուր կը վերանորոգին : Ո՞չ ապաքէն այս մի յայտնի նշան է , որ ո՛չ միայն Ազգը , այլ և Արեւսփոխանութիւնն իւր օգտին գործածելու ուսումն : Ո՞չ ապաքէն այս մի յայտնի ապացոյց է , որ Ազգը զուրկ է բարոյական դաստիարակութենէ : Մինչդեռ Սահմանադրութեան օգին պիտի դատապարտէր անհասից ոմանց մէջ գտնուած հանրաշխարհ շահադիտութիւններն (in

trigue) ընդհակառակն անհասաներն կը յաջողին արծակ համարձակ դատու փետել և ՚ի խաչ հանել Սահմանադրութեան ճշմարիտ ոգին . մերթ կոն դակի զոհելով, մերթ նորելուկ յարաբերութեան, մերթ դաւադրութեան, մերթ առաջնորդներու անձնական սը նտաի վէճերու, մերթ կրկն հակառակութեան, և այլն և այլն :


Այսպիսի զեղծումներն բնաւ չը պիտի պակսին մինչեւ որ Արեւիտիտան մը համարատու չը լինի առ ընտրողս իւր և փոխադարձաբար մինչեւ ընտրող հասարակութիւնն ևս համարառու չը լինի իւր ընտրած երեսփոխանէն : Գուցէ այլք այս տեսակ զեղծմանց բարձման մասին ուրիշ բան ասեն , սակայն մէք դարձեալ կը կրկնեմք թէ՛ ասոնց ամենուն նախապատճառը բարոյական կրթութեան սրկաստութիւնն է . մինչեւ որ ժողովրդեան սիրտն ու հոգին բարոյականութեամբ չը զարգանայ , սահմանադրական սկզբունքներն ժողովրդեան մէջ արմատ չեն կարող բռնել և հետեւաբար զեղծումներն բը նստինք չեն լիներ :

(Օրէնք մի որչափ ալ արդար և ճրջ մարտ լինի , երբ իւր գործադրութեան մէջ փոխանակ ուղղութեան և ճշմարտութեան՝ նենգութիւն և սըտութիւն մտնեն . նոյն օրէնքը իսպառ կոչնչանայ և անօգուտ կը լինի : Արդ՝ քանի որ Արդին մէջ բարոյական կրթութիւնը յարգ և արժէք չունի , որչափ ալ ձեռնհաս անձինք որոշուին , դարձեալ Սահմանադրութիւնը անգործադրելի պիտի մնայ . և եթէ գործադրուի եւս օգուտ մի չը պիտի կարողանայ առնել , վասն զի ասպհով եմք , որ աւելի անձնասէր մարդկան , նենգամիտ անձանց ձեռքը խաղալիկ մը պիտի լինի քան թէ մի այլ ինչ :

Անշուշտ բարեմիտ ընթերցող, հա-

մոզուեցար մեզ հետ , որ ասոնց բարոյական կրթութեան Սահմանադրութիւնը անօգուտ է . համոզուեցար անշուշտ , որ ազգի մը կամ ժողովրդեան մի յառաջադիմական յեղափոխութիւնը բարոյական կրթութեամբ կը կատարուի , համոզուեցար , որ հասարակութեան մի ամենամեծ ճոխութիւնը , ահեղ զօրութիւնը իւր բարոյականութեան մէջ է . երբ ազգ մի չունի բարոյականութիւն , յոր ամփոփեալ կան գերագոյն օրէնք ազատութեան, հաւասարութեան և եղբայրութեան , եթէ նոյն ազգն անկախ իշխանութիւն մի եւս ունենայ , դարձեալ իւր վիճակն անարգ է և ինքն ստրուկ : Թող կրօնքն և քաղաքական օրէնքը սանձարձակ թողուն ժողովուրդներն , որ անբարոյականութեան մէջ լողան , իսկոյն համայն աշխարհ կերպարանափոխ կը լինի , ազգերն բաձարձակ վայրենութեան մէջ կ'ընկղմին և ամեն օգտակար օրէնքներն ՚ի հիմանց կը քայքային : Այս ամենէն կարող եմք հետեւցնել , որ ժողովրդոց բարելուութիւնն , իրաւանց երաշխաւորութիւնն ու խաղաղութիւնը միմիայն բարոյականութեան մէջ է . իսկ ծայրայեղ թշուառութիւնը անբարոյականութեան մէջ :

(Շարունակելի :)
Գ . Ս . Խ .



Պ Ա Շ Տ Օ Ն Ե Ա Յ

ԵՒ Պ Ա Շ Տ Օ Ն Ա Վ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Տիեզերաց յարատեւութեան գրեխաւոր պատճառներէն մին և գոգցես առաջինը նորա կարգն ու կանոնաւորութիւնն է : Այժմ ամենիմաստ Արարիչը՝ հրոյն դէմ՝ ջուր , տաքութեան դէմ՝ ցրտութիւն , և լուսոյ դէմ՝ խա-

ւարն չսահմաներ, անշուշտ անհնար պիտի լինէր տիեզերաց տեւականութիւնը. վասն զի կամ բովանդակ երաշտութեամբ, կամ բոլորովին ցրտութեամբ կամ լուսով և կամ խպառ 'ի խաւարի, մարդկութիւնը և ամենայն ինչ որ կայ բնութեան մէջ, խոյստ մնասուց ենթարկուած պիտի լինէին: Ա երցնւր տիեզերաց կարգէն բան մի և ահա ամենայն ինչ պիտի խանդարի, աշխարհ տակն ու վրայ պիտի ըլլայ և ամենայն արարածք 'ի կործանումն և 'ի կորուստ պիտի ընթանան և կանոնաւորութեան ուրիշ հընարք չկայ, բայց եթէ ամեն բան իւր սահմանին մէջ անխափան և առանց սահմանէն շեղելու միշտ գործելով: Քանզի նոյն արդիւնքը յառաջ պիտի գար եթէ հուրը փոխանակ այրելու ջրոյ պաշտօնը կատարէր, (ջուրն ալ իր պաշտօնին մէջ մնալով) կամ ջուրը՝ հրոյն, և ամենը նոյնպէս և փոխադարձաբար: Ա երջապէս օրինաւորութեան մէջ և անվտանգ մնալու միակ միջոցն է ամենուն իրենց սահմանին և պաշտօնին մէջ մնալ. ապա թէ ոչ եթէ սակաւ ինչ շեղին ամենայն ինչ անդարմանելի մնասու ենթարկուած կը լինի:

Արդարեւ կը պատկառ իմ և ցաւօք սրտի կ'ափսոսամ, երբ կը տեսնեմ որ բնութեան մէջ ամենայն արարածք մինչեւ ցվերջին միջասն և նոյն իսկ ամենայնտին փոշին անգամ չեն անցնիր իրենց պարտ ու պատշաճ սահմանն և կը պահեն ու կը պաշտեն ամենակարող Արարչին կամբը « Սահման եղեր եւ ոչ անցանեն », (Սաղմ. ԸԳ. 9). բայց ընդ հոկառակն մարդը, այն բանական և խահուն էակը, երկնայնոց ժառանգակից և անմարմնոցն հոգեկից, որ փոքր մի խոնարհ ստեղծուած է լուսոյ պաշտօնեաներէն « Փոքր ինչ խոնարհ արարեր զնա (զմարդն) քան զհրեշտա-

կըս ». (Սաղմ. Ը. 6). այն հոգեկիր ուրարածը, որ բոլոր գոյից մէջ բարձր 'ի գլուխ կը պանծայ իւր անմահ հոգւովն և ամեն արարածոց կատարելն է, բովանդակելով իւր մէջ ամենուն կարողութիւնն ու զօրութիւնը և կը բերով իւր վրայ յաւիտենական ամենարի Արարչին սուրբ և պաշտելի պատկերը. այս գերագոյն էակը շատ և շատ անգամ իւր սրբազան պարտքերը ռաբի տակ կ'առնէ, և յանդուգըն համարձակութեամբ իւր բազմագուլթ Ասխախնամողին իրեն համար դրած սահմանը կոխելով՝ կ'անցնի: Սինչդեռ ինքն կոչուած է 'ի պաշտօն և 'ի փառաբանութիւն Աստուծոյ, խապառ կը մոռնայ զայն, պաշտելով զունայնութիւնս և զկիրս և փառաւորելով զսատանայն, որ նոյնպէս իւր չափըն ու սահմանը չճանաչելով և իւր կոչումն ու պաշտօնը մոռնալով՝ դժոխոց անդնոց մէջ խորասուզուած, գլուխ և իշխան եղած է իւր նմանիներուն, ինչպէս եղած էր գլուխ եւ առաջնորդ խոտորման: Սինչդեռ մարդը կոչուած էր, յիշխանութիւն և 'ի վայելումն ամենայն արարածոց որ յերկրի, կը մոռնայ, անտես կ'առնէ և կ'արհամարհէ նա սոյն աստուածապարգեւ իշխանութիւնը, եւ իւր պարտքն ու իրեն պատշաճ սահմանը չճանաչելով յանդուգն մրցմամբ կ'անցնի իւր բարոյական աստուածագիր շրջագծէն, կամելով մտանել յայլ իմն ընդարձակ և անձիր սահման, որով կը դատապարտի նա 'ի մահ՝ 'ի պատիժ իւր անհնազանդութեան:

Արդը՝ գոգցես անարդանք կը համարի իւր անձին, կրել իւր վրայ աստուածային սուրբ հոգին, հրեշտակական անմեղ և անվախճան կեանքն ու բանականութեան ճշմարիտ աղբեցութիւնը, և կը դիմէ դէպ 'ի շարն. նորա

Տառայութիւն կը մատուցանէ . մար-
մինը և անոր ապ սկանարոր ցանկու-
թիւնքը կը պաշտէ ու կը խնկարկէ ,
էզճման ու զեզճման մէջ կը թաւալի ,
քարթթու ցանկալ Մտուածոյ սուրբ և
նախանձաբառ բարկութիւնն իւր վը-
րաց , որով կը սգստնայ Մտուած ա-
սեւրով , « Մի մնացէ ոգի իմ 'ի մարդ-
կանդ յայդմիկ յաւ խուան . վասն լի-
նեցոյ դոցա մարմին » . (Օճնդ . Զ . 3) .
« Մարդ 'ի պատուի էր և ոչ խնցաւ .
հաստարեցաւ անասնոց անբանից ' և
նմանեցաւ նոցա » . (Սող . ԽԸ . 15-21) :
Վերջապէս աւելորդ կը համարիմ ընդ-
երկար թուել աստանօր այն ամեն
գործքերն , որոց համար մարդը կու-
ռած է և իւր կոչման ներհակը կը
գործէ , այլ կ'անցնիմ բուն նպատակիս ,
որ է՝ այժմեան քանի մի պաշտօնավա-
րաց թերութիւնը ցոյց տալով նոցա
վնասն եւս առաջը դնել յայտ յան-
գիման :

Մարդկութիւնը մի մեծ աշխարհ
է . մէն մի մարդ անգամ արգէն իւր
անձնաւորութեան մէջ աշխարհի բո-
վանդակութիւնը կը կրէ : Բնութեան
ամենագլխ սէ որ մասը մարդկութիւնն
է , վասն զի առանց մարդոյն բնու-
թիւնը թերահատար է , բազում մա-
սամբ վասնգեալ , խանգարեալ և մեր-
կացեալ 'ի գեղոյ , 'ի շորհաց և 'ի լա-
քանչելեաց : Աւրեմն ինչ որ աստղինք
բնութեան կարգին համար , նոյնը պի-
տի կրկնեմք և մարդկութեան համար .
ինչպէս աստղինք , որ եթէ բնութեան
պաշտօնեայք թերանան իրենց պաշ-
տօնէն կամ իրենց սահմանեալ գործը
թողլով այլ գործոց ձեռնարկեն , տիե-
զերք ամենայն վնասու ենթարկուած
կը լինին . նոյնպէս պէտք է խմանամք
և մարդկութեան համար , ուստի կըր-
նամք հետեւցնել թէ՛ եթէ մարդկու-
թեան գլխաւոր անդամներն ևս , որք

նորա ամբողջութեան էական մասը կը
կազմեն , այդպէս լինին , միշտ նոցա ա-
մենամեծ շահը 'ի կրուստ է և վնա-
սուց ենթարկուած : Վասպէս նա և
ինչ որ խնցանք արգէն ընդհանուր
մարդկութեան համար , նոյնն է և նո-
րա անդամոց համար , և հետեւապէս
նոյնը պիտի խմանամք մեր Վրդին հա-
մար եւս :

Վրդի մը տեւականութիւնը իւր
գլխաւոր տարերքը կազմող անհատ-
ներէ կախուած է : Վրդի մը գլխաւոր
տարերքը կազմող անձինք նորա են , ու-
րնք բազմաբիրտն ձգամք , հոգւով և
մարմնով կը ջանան նորա փառաց եւ
օգտին համար , նաև՝ որոց վերապահ-
ուած է ազգային ամենամեծ գործ-
քերն . այստիտի անհատներ ընդհան-
րապէս երկու դաս կը բաժնուին՝ եւ
կեղեցական և քաղաքական պաշտօ-
նեայք : Կեղեցական կարգէն են Վա-
թողիկոս , Պատ խորք , և այլ եկեղեցյա-
կան պաշտօնեայք , որոց հսկողութեան
յանձնուած է ազգայնոց մի մասը . իսկ
քաղաքական կարգէն են , Թագաւորք ,
Իշխանք , ազգային ժողովոց և խորհրդ-
դարանաց գլխաւորներն և անդամնե-
րը , նաև Ասուցիչք , Լրագրապետք
և այլն : Եթէ Վրդ մը ջանացած է ամ-
րասնդել իւր հիմը ազգային պաշտօ-
նախօրաց բարեվարութեամբն ու ազ-
նուութեամբը , այսինքն պաշտօնա-
տարք այնպէս լինին որ ոչ լսի բանիւ ,
այլ մանաւանդ գործով օրինակ ըլլան
ժողովրդեան , որ նոցա վարքն ու կեան-
քը քարոզ լինին մէն մի առաքինու-
թեանց , և այլն և այլն . այն ատեն նո-
րա տեւականութիւնը հաստահիմն է ,
ոչ իջանել անձրեւաց , ոչ հոսումն դե-
տոց , և ոչ փոթորիկք և հողմուներ չեն
կարող դայն տաարալել , վասն զի աւազի-
վոյց հաստատուած չէ , այլ հաստա-
տուն հիմանց վրայ Վասպիտի պաշտօնա-

փորք սիւնք են շինութիւն Վրդին, որոնք
 եթէ նուազ ինչ շեղին, ազգութիւնը
 տատանման և անկման վրայ կը լինի.
 Իսկ եթէ խորտակուին և հրապարակի
 մէջ ձգուին, այն ատեն ազգայնոց
 անկման և գայթակղութեան քարեր
 կը դառնան և Ուտի եթէ այսպիսի
 անհասներ իրենց Վրդի օգտին պա-
 հանջած ամենակարեւոր պարտաւո-
 բութիւններն ու պաշտօնները յետա-
 ձգելով ալ և այլ գործոց ձեռնարկեն,
 մանաւանդ այնպիսի գործոց, որ ինք-
 նին արդէն փնտսակար են, անշուշտ
 նոյն ազգին օգուտը փաստու ենթար-
 կուած է և նորա ընթացքը դէպ 'ի
 անկումն է:

Պաշտօնը կամ գործը որչափ մեծ
 նշանակութիւն և մեծ արտադրութի
 ունենայ, նոյնչափ և նորին պաշտօնեայն
 մեծ նշանակութիւն կ'ունենայ. պաշ-
 տօնէի մը արժէքը իւր գործէն ու պաշ-
 տօնէն կը չափուի: Վործը պաշտօնէի
 նկարագիրն ու սրտի եւ բնութեան
 յայտարարն է: Վործը կամ պաշտօնը
 կշիւ մ' է, որով պաշտօնէին արժէքը
 չափուելով, ըստ այնմ յարգ կամ ա-
 նարգանք, վարձ կամ պատիժ կը հա-
 տուցուի նմա: Վրդ' ինչ է ազգային
 թերթերու կամ հանգէտներու պաշ-
 տօնն և ինչ նպատակու ասհմանուած
 են նորա: Այս հարցմանց պատասխա-
 նը դիւրաւ կը գտնանք եթէ իւրա-
 քանչիւր թերթերու սկզբնաւորութե
 Յատուութեան ընթեռնուածք: Քանի որ
 տեսնեմք այն տեղ խիշն, որ ամենքը
 կը խոստանան Վրդի օգտին ծառայել,
 նմա պաշտպան և զօրովիքն հանդի-
 սանալ, ջանալ ազգային թերթութիւն
 ներք տակաւ առ տակաւ անյոյրացը
 ներք և այլն, սոյնպիսի իմաստով խո-
 շոր խոստումներ և ակնախտիղ նպա-
 տակներ, արդարեւ սուրբ նպատակ,
 առարկին և գովելն խոստումն: Այս,

ազգային թերթերն մեծ նշանակու-
 թիւն պէտք էր ունենային ազգին առ-
 ջեւ երբ ըստ իրենց խոստմանց խիստ
 օգտաւէտ արդիւքներ յառաջ բերէին:
 Վրդային թերթերը, իրենց բուն նը-
 պատակաւն առնելով, բազմաթիւ օ-
 դուաներ ունին ընդհանուր Վրդու-
 թեան համար, ընթերցասիրութիւնը
 կրնան տարածել, կոյր և անկոյս մտաց
 մէջ լոյս կրնան սփռել, անխիղճ հո-
 գինները կրնան հրաւիրել շատ անգամ
 'ի զգաստութիւն, պիղծ և մեղապից
 սրտերն մարբելով առաջնորդ կը լինին
 նոցա 'ի բարութիւն և յանմեղութիւն,
 յուղղութիւն և 'ի բարեկեցութիւն,
 միով բանիւ, մարդոց միտքն ու սիրտը
 բնասէս և բարոյապէս կը կրթեն ու
 կը մշակեն, փուշերն ու տատասկները
 'ի բաց ձգելով կը ցանեն հոն առա-
 քինութեան բազմատեսակ անմահա-
 բոյր ծաղիկներ, որոց բուրումն հաճոյ
 է Աստուծոյ և մարդկան, ուրեմն լը-
 բագրութիւնը խիստ մեծ նշանակու-
 թիւն ունի Վրդի մ' առջեւ. հետեւա-
 պէս և լրագրապետք Վրդի մը գլխա-
 ւոր պաշտօնէից կարգէն կը համարուին:
 Ուտի երբ լրագրապետք իրենց բուն
 պարտքը անտես առնելով, իրենց 'ի
 սկզբն հրապարակու առաջն Աստու-
 ծոյ, հրեշտակաց և մարդկան՝ ըրած
 ուխտը և տուած խոստումն մերժե-
 լով, իրենց պաշտօնէ սե թիւնը առ չարն
 գործ դնեն, արդարեւ մեծ է անտի
 յառաջ գալիք վնասը, հետեւաբար
 մեծ է նոցա յանցանքը, որով և մեծ է
 նոցա դատապարտութիւնը, քանզի ի-
 ընց յանցանքը ոչ առ մի որ միայն է,
 այլ առ ամենեօին, ոչ ներկայիս միայն
 է այլ և յապագայս պիտի տեսէ, ուս-
 աի որչափ վնասը մեծ ըլլայ այնչափ ալ
 յանցանքը մեծ կ'ըլլայ և դատապար-
 տութիւնն արդէն յանցանաց անմիջա-
 կան հետեւութիւնն է:

Չեմ կարող աստանօր ընդհանրապէս խօսիլ բոլոր լրագրագետաց համար, վասն զի կան արդարեւ այնպիսիք, որք հրատարակաւ շնորհակալութեանց արժանաւորութիւն ունին, եթէ միշտ այնպէս օգտակար, համեստ ու պատշաճ կերպիւ շարունակեն, ի այց կան մասնաւորներ ևս, որք փոխանակ թերութեանց հուրն, ջրով շիջուցանելու, առաւել ևս կը բորբոքեն իրենց ախմարութեան դիւրափառ խեղերանքը դիզելով նորա վրայ փոխանակ տգիտութեան դժոխային ժանկրներն ջարդելու, այլ ևս կը սրեն իրենց ապօրինի գրուածքը ճարակ տալով միով բանիւ փոխանակ ըստ իրենց պարտուց Վրդութիւնը խաւարի մահուանէն ազատելով ՚ի կենցաղական բարօրութիւն և ՚ի կենդանութիւն յաւիտենական առաջնորդելու, շայտ անգամ կըր փարեսեցւոց նման ինքեանք ոչ մտանեն և զորս մտանենն արգելունս կան, այն, կան այնպիսիներ, որոնց կամքն ու նպատակը ոչ թէ Վրդային օգուան ու շահն, այլ անձնասիրութեան հաճոցքը գգուել և փայտայել է: Կան այնպիսիներ, որք արծաթախրութեան մահացուցիչ կրիւք վարակուած, ստակով գոյլեստ կամ անարգանք կը ծախեն, որոց համար ներբողի կամ պարտաւի մը առիթն ոչ այնչափ են թակային գործքերն են, որչափ դրամն ու արծաթը: Ար պատկառիմ աստանօր բացայայտ յանուանէ կոչել այսպիսիքը, ուստի ու շիմ ընթերցողաց կը ձգեմ, որ իւրաքանչիւր գործէն հետեւցնեն պատճառն:

Միթէ չկա՞ն այնպիսիք որք թերթերն իրենց համար թատրոն համարած են ուր իրենց տգիտութեան, շահասիրութեան, ագահութեան և անհաշտ ատելութեան կատակերգութիւնը կը կատարուի, ՚ի տես ամենե

ցուն և ՚ի գայթակղութիւն համեստութեան: Չկա՞ն այնպիսիք, որք Վրդին օգուտը, այսինքն՝ իրենց սրբազան և ուխտեալ պարտքը ընդ երկար ոտնակոխ առնելով, անարգ շահահանգրութեամբ իրաւունքը թիւրել, ճշմարտութեան ներհակիլ, միմիայն իրենց անձնական կիրքերն կը ջանան յագեցնել, նախատալից խօսքերով միմեանց անուաններն աղարտել, անպատկառ դիմօք հասարակութեան առջեւ զիրար հայհոյել, կըր մտօք զիրար թշնամանել և վերջապէս յետին աստիճան ցածու թեամբ և սարսափելի վատութեամբ, հրաւեր կը կարդան անմեղ մանուկներուն եւ օրիորդներուն, որ իրենց ստապատում թերթերն կարդան և այսպէս Վրդի մանկանց սիրտն ու միտքը կը մոլորեն: Թողուք որ, կռիւ, անհաշտ թշնամութիւն և անլուր հայհոյանք կ'ուսուցանեն նոցա, այլ և այնպիսի պիղծ պատմութիւններ ու բարոյականի և ճշմարտութեան դէմ խօսքեր կ'ընեն որ բոլորովին բարքերը կ'ապականեն, արդարեւ սոսկալի տեսարան: Միթէ չկա՞ն այնպիսիք, որք փոխանակ իրենց թերթերովն տկարամիտ և ռամիկ հասարակութեան նախապաշարումներն ու ծուռ դատողութիւնները ուղղելով, զանոնք ՚ի զգուշութիւն հրաւիրելու և ուղղութեան ու ճշմարտութեան ձանապարհը մտցնելու, իրենց անմտախոհ գրուածներովն, անխորհուրդ խօսքերով և թշնամական կրիւք վարակեալ կամահաճ և ոչ թէ արդար դատողութիւններով մերթ ստոր եւ մերթ անոր պատիւը աղարտելով մըտօք մանուկները կը գայթակղեցնեն, և առաւել ևս տգիտութեան և տարակուսութեան անդունդը գրբելով գողցէս հող ալ կը լեցնեն վրանին որ չկարենան աղատիլ նոյն խաւարչտին

և դիւարենակ յուսահատութեան վայրէն : Միթէ չկան այնպիսիք, որք փոխանակ իրենց թերթերովն ընդհանուր հասարակութեան կրթիչ և դաստիարակ ներկայանալով, զանոնք աւելի կրօնասիրութեան և աստուածապատուութեան հրաւիրելու, անոնց սիրարքրիատոնէական սուրբ հաւատոյ ճըշմարտութիւններով պարտելու, զովացնելու և աւետարանական սուրբ սերմանց ընդունարան խորին ահօսներ բանալու, ընդհակառակն իրենց մէկ սպականիչ կիրքն ազատորէն պաշտուելու համար, ընդդէմ քրիստոնէական հաւատոյ խօսքերով եւ գործքերով, հաւատոյ ճշմարտութիւնները կը դաւաճանեն և այլոց եւս մողորութեան պատճառ կը դառնան, և չգիտեմ թէ ինչով պիտի քաւեն այս չարութիւնը : Արդարեւ այսպիսի թերութիւններ լրագրապետի հասարակութեան ուսուցչի մը համար աններելի է, կամ թէ այսպիսի թերութեանց ենթակայ եզրով մը համար լրագրապետութիւնը, խաբառ արգելեալ և յաւիտեան անմերձենալի պէտք է լինի ինչպէս պղծութիւնը՝ սրբութեան : Լրագրապետի մը սոյնպիսի յանցանաց հետևութիւնն առաւել է քան խումբ մի մէկանդ ժողովուրած հասարակ մտորկան . վասն զի լրագրապետը քաղաքի մը մէջ չէ, այլ իւր թերթովն բովանդակ աշխարհի մէջ է և մշտակեաց : Ուստի քանի որ սոքա իրենց ստանձնած պաշտօնը և նոյն պաշտօնին մէջ ունեցած չափն ու սահմանը չեն ծանաչեր, և իրենց որոշեալ պարտաւորութիւնը մէկդի ձգելով յիշեալ և անոնց նման ուրիշ չար ու վատութեան գործերու կը ձեռնարկեն, անշուշտ մնասը այնանդ ներկայ է, մնաս ոչ միայն գործողին, որ անպատիւ և անարգ կը մնայ հասարակութեան առջև, այլ

մանաւանդ մնաս Ազգութեան, որոյ մանկտին (չատ անգամ նա և չափահասներն), փոխանակ ուղղուելու չարաչար կը մոլորին :

Արդ՝ խօսքս այսպիսեացդ ուղղելով կը խնդրեմ որ փոխէք սոյն ընթացքը . ես կը խոստովանիմ, որ դուք ինձմէ շատ լաւ գիտէք սոյնպիսի ընթացից հետևութիւններն, բայց և այս խկէ ցաւալին, որ գիտնալով հանդերձ կը կամակորիք : Այո՛, այո՛, պէտք է փոխել սոյն դիրքը, վասն զի ասոր վախճանը տիրառիթ և բաղմալիշտ է, այս ընթացքը կ'առաջնորդէ դէպ 'ի թըշուառութեանց անդունդը ինչպէս արդէն սկսած է տեսնուիլ, ինչպէս որ դուք եւս շատ անգամ նկատած էք Ազգին ղեղձմանց վերայ, որոց պատճառը ձեր անխոհեմութիւնն է . . . : Այս կերպով դուք, ձեր վրայ կը բեռցնէք մեղաց և պատասխանատուութեան անտանելի ծանրութիւն մի, դուք, անմեղները գայթակղեցնելով՝ ինքնին ձեր ձեռքով կը կապէք վզերնիդ անբառնալի երկանոքար մի վատահամբաւութեան անդունդը սուղանելու համար . դուք, ինքնին ձեր գործերով զձեզ գերեզմանի խկ անարժան կ'ընէք : Աւետարանը կտրգացէք և պիտի տեսնէք ձեր վիճակը, եթէ այսպէս ընթանաք դեռ ևս, ըստ գիտցիք և համոզուեցէք, որ հանգըստեան տապանին մէջ անգամ չիք ձեզ համար հանգիստ : Հոն, գերեզմանի մէջ արդարոց փոշին անգամ ձեզմէ պիտի զջուրի և զձեզ պիտի վանէ . անմեղներու խումբ մի, որ 'ի ձէնջ գայթակղեցան ձեզ դէմ դատաստանի պիտի գան և պիտի դատապարտեն զձեզ իբրեւ դժոխոց արժանաւորք և կորստեան ժանտ որդիք : Աոցա արդար բողբը և բաղմախուռն ձայներն անդադար ձեր վշտերը պիտի բաղմա

ցրնեն, հետեւապէս չիք ձեզ համար հանգիստ : Չեր ըրած խաբէրացու թիւնը, որով Ազգ մի ողջոյն կը խաբէք, օգտակար լինիլ խոստանալով, ձեր ուսուցած անբարոյակհանութիւնը և հաւատաւրացութիւնը, պիտի տանջեն անշուշտ զձեզ յաւիտեանս և չիք այնուհետեւ ձեզ փրկութիւն. ասոր առաջքն աններու ուրիշ հնարք չկայ. բայց միայն թողուլ և ՚ի բաց հեռանալ յայտպի ընթացից, ուղղուել և ճշմարտութեամբ օգտակարին ծառայել : Աւստի եթէ ընդհանուր Ազգի մը օգուտը ազգեցութիւն չենէր ձեր խղճին, եթէ մարդկութեան, ազգութեան և հայրենեաց սէրը չներգործէր ձեր սրտին վրայ, և եթէ մինչեւ հիմայ ձեզ համար գրուածներն ու խօսուածները չեն շարժեր զձեզ յետս կալ, գոնեա՛ ձեր անձին համար ձեր կենաց հանգստութեան ու բարսութեան համար, զգոյշ կոցէք և հաճեցէք փոխել սոյն ընթացքը : Աւել մնացէք, որ եթէ ամենքը խաբուին, աշխարհ ամենայն առ ժամանակ մի ձեզ աշակերտի, այսու ամենայնիւ կայ ժամանակ, որ պիտի զձեզ դատաստարտել իբր չար ու անմարդասէր մատնիչներ, ժամանակը ո՛չ ՚ի ձէնջ և ո՛չ ձեզի պէսներու խմբերէ չխաբուիր, ժամանակը կայ կ'ըսեմ, որ ներողութիւն և գթութիւն չգիտեր, որ ինչ պէս վարձատրութեան, նոյնպէս սրատու հասերու մէջ անկշիռ է, ժամանակը զձեզ և ձեր գործքերը պիտի դատաստարտէ և ձեր այս մեծ չարեաց պիտի փոխարինէ անշուշտ ըստ արժանւոյն, եթէ ոչ այսօր, գոնեա՛ վաղը, և եթէ ոչ վաղը, այլ անպատճառ ապագայի մէջ, պիտի կ'ըքէ ձեր թըշուառ անունը՝ Խաբէբայ, Որպարտութ, Ազգաբեաց և այլն սոյնպիսի անարգ և սատրին մակդիրներով : Գիտցէք զնաք,

որ Ազգի մը բարոյապէս վնասելը, ըզ՛ր Քրիստոս ՚ի խաչ հանելու չափ մեծ մեղք է. Ազգ մի ամբողջ ՚ի մահ մատնել, ստակալի ոճիր, հետեւապէս հանդերձելոյն մէջ ալ, ձեզ համար Աստուածսպան շրէկց բաժնէն ուրիշ չընորհք չկայ : Դնաք Աստուծոյ որպէք էք, և պէտք է որ ձեր սահմանին ու պաշտօնին մէջ մնաք, ապա թէ ոչ միշտ ՚ի կորուստ է ձեր ընթացքը և հանապազ ՚ի մահ յաւիտենական :

Գ . Տ . Յ . Խոմայեցի :
Աշակ . Ժառ . Վարձարանի :

Ե Ր Կ Ո Ւ Ի Թ Օ Ս Ք

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՇՏՕՆԵՒԻՑ ՈՒՂՂՈՒԱԾ

(Շարունակութիւն, տես թիւ 9)

Ի .

Ա Ն Գ Ո Ր Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն

Այլեղեցւոյ Պաշտօնէից տգիտութիւնը թէ իրենց անձին և թէ հաւատացելոց համար որչափ որ վնասակար է և վտանգաւոր, նոյնչափ ալ անգործութիւնը :

Առհասարակ ամեն մարդու համար աշխատութիւնը սուրբ պարտաւորութիւն մի է, և անհրաժէշտ կարեւորութիւն. եթէ ընտրութեան մէջ ամեն բան գործունէութեան և պէտանաւորութեան կը մղուին ըստ իւրաքանչիւր չափու և պայմանի, առաւել եւս մարդը պէտք է մղուի. իսկ ուր անգործութիւն կայ, հոն պիտանաւորութիւն չի կայ. ուրեմն անգործ մարդը անպիտան է և ծանր բեռ մը մարդկային ընկերութեան :

Ամեն մարդ անդստին ՚ի սկզբանէ աշխատութեան սահմանուած է, որով իւր գոյութիւնը կը սրահէ եւ կարողութիւնները զարգացնէ : Աշ

խառութիւն հարկ է մարդուն, ոչ միայն ապրելու, այլ և զգաստ և անմեղ մնալու համար. ինչու որ միտքն ու զգայարանքներն անդործ չեն կրնար մնալ: Ամեն մարդ պատուաւոր վիճակ մի բնտրելով նոյն վիճակին մէջ իւր չափովը պէտք է աշխատի անխոնջ, անմեղ և արդար՝ միշտ դէպ ՚ի կատարելութիւն գիտելու ճգամբ: Այս անկեղծ ճիշդ կրատիպէ զմարդ շարունակ շարժման մէջ լինիլ. և միաբը իւր մասնաւոր գործոյն վրայ յառած և ըզբաղէցուցած լինելով մեղանչելէ ազատ մնալ. մանաւանդ հարկ է որ մարդ ժամանակ չի թողու մեղաց և չար խորհրդոց անձնատուր լինելու, այս կերպով միայն կրնայ վտանգէ ազատ պահել մարդ իւր մարմինն ու հոգին:

Աշխատութիւնը, թողունք որ բընական պարտաւորութիւն է, այլ և աստուածային հրամանաւ ալ վճռուած և պատուիրուած լինելով, ոչ միայն ընդհանրացած այլ և սրբագործուած է. պէտք է աշխատիլ և աշխատութեան պտուղը վայելել, աշխատողն է միայն վարձուց արժանի, առանց աշխատանաց ուտելը գողութիւն է և զրկանք. չաչխատողին ապրիլն անգամ ոճիր է, բընաւ մէկը չէ կարող այս պարտքէն ազատ լինիլ և անվնաս կամ անպատիժ մնալ. քանզի վայրկեան մը բաւական է փորձութեան համար, որ համեստ աշխատանքէ դատարկ գտնէ զմարդ. այն ատեն իսկոյն վրայ կը յարձակի և կը վտանգէ զայն բնապէս ու բարոյապէս:

Անգործ մարդը ծանր բեռն է աշխարհի, վնասակար անգամ մարդկային ընկերութեան, թշնամի և յափշտակիչ հասարակաց աշխատութեան, նըման պիճակներու՝ որ անաշխատ կը յափշտակեն մեղուաց անխոնջ աշխատութեան քաղցր սրտուղը, կամ նման վնասակար հեղեղներու, որ երկրագործին

աշխատութեան նպաստելու տեղ կը բերեն կը քանդեն և աւերակ կը դարձնեն նորա այնքան ինամօք պատրաստած այգին, պարտեղը և կամ սերմանած արտը: Չըկայ վիճակ մի, ուր մարդ ըստ իսպուած լինի դատարկութեամբ ապրիլ, և արդարութեան առջեւ անբասիր մնալ, բաց ՚ի ծանր հիւանդութեանց և հաշմութեանց ատեն. ուր ոչ միայն չէ կարող աշխատիլ, այլ և օգնութեան կը կարօտի, որուն օգնել ամեն մարդու պարտքն է, քանզի իւր ընկերն է:

Ասոնք բաղմամբիւ դարերու փորձով հաստատուած ճշմարտութիւններ լինելով ոչ կրնան հերքուիլ և ոչ ալ երկար փաստերու կարօտ են, քանզի ամենօրեայ փորձերով և կենդանի ապացոյցներով շրջապատուած ենք:

Արդ քանի որ մարդկութեան համար այսպէս է, Այկեղեցւոյ պաշտօնեայք ալ իբրեւ մարդիկ են թակայ են անշուշտ այս պարտուց, և ազատ չեն երբէք նորա զանցառութեան առթիւ գալիք չարիքներէն. ուրեմն Այկեղեցական ալ թէ իբրև Աստուծոյ արարած, և թէ իբրեւ մարդ՝ պէտք է աշխատի և իրեն յանձնուած պաշտօնը կատարելու համար գործէ. պէտք է շարունակ գործէ. իւր անձը ընտիր կացուցանելու և իւր կենսքը արդարութե վարած և վայելած լինելու համար ներուած չէ իրեն երբէք դատարկ կենալ. հանգիստն անգամ իւր անմեղ զբաղումը պէտք է ունենայ. Իսկ իբրեւ Աստուծոյ եկեղեցւոյն պաշտօնեայ, ինչպէս ամեն լաւութեանց մէջ, նոյնպէս և աշխատութեան մէջ իւր անձը, միտքն ու սիրտը սուրբ պահելու, արդարութեամբ ապրելու, հաւատացելոց օրինակ լինելու համար պէտք է գործէ և սուաւել և ս գործէ, աշխատի անխոնջ և շատ անգամ անբուն: Չը

գիտնալու բան չէ այս վասն զի, թող որ Յիսուս Վրիստոս օրինօք պատուիրած և օրինակով ալ ուսուցած է, այլ և բանականութեան լոյսը ըսել տուաւ երբեմն հեթանոս փիլիսոփայ բանաւտեղծի մը թէ՛ « Հասարակաց վրայ հոգ ու խնամք տանելու պաշտօնն ունեցողին չի վայելը որ գիշերն 'ի լոյս ննջէ »: Հապա դու քեզ համար ինչ պիտի ըսես ո՞վ եկեղեցւոյ պաշտօնեայ որ ոչ թէ միայն գիշերը, այլ և ցերեկն 'ի բուն դատարկ անցրնելէ զատ շատ անգամ քնով կը դանդաղիս, կամ դատարկաբանութեամբ և կամ խտրելով ու զբօսանքներով կը զբաղիս, որք չեն վայելը քեզ, վասն զի քեզ յանձնուած է ժողովրդեան հոգւոյն փրկութեան ամենամեծ հոգը . քու մէկ փոքրիկ զանցառութիւնդ, անզգուշութիւնդ և անհոգութիւնդ կրնայ ժողովրդեան սրտին մէջ անբուժելի վէրքեր բանալ: Սորա ճշմարտութիւնը միթէ չէք տեսներ ժողովրդեան մէջ ամեն օր, չէք համոզուիր, որ ժողովրդեան գայթակղելոյն, 'ի հաւատս տկարանալուն և շատ անգամ մեծամեծ մեղքերու մէջ ինկնելուն պատճառը դուք էք, ուրկէ ոչ դուք և ոչ այլ որ կարող է հանել:

Եկեղեցւոյ պաշտօնէին չի վայելը դատարկ մնալ. իւր հոգեւոր պաշտաման մէջ յեղգութիւնը իւր քրէական յանցանքն է: Անհար է որ մարդ հոգեւոր պաշտաման մէջ զբաղիլ ուզէ, և գործ չէ կայ ըսէ, քանզի շարունակ գործելու առիթներ ունի՝ քանի որ ժողովուրդն յաջորդական է, և մէն մի հոգւոյ փրկութիւնն անգամ մեծ խընամոյ և հսկողութեան կը կարօտի. իսկ եթէ լինի որ իրօք իւր յատուկ պաշտօնն ու վիճակը հանապազ աշխատելու ջափ զբաղումն չի մատակարարեր, (որ անհար է) պէտք է հոգ տանի և իրեն զբաղելու և հաւատա-

ցելոց օգտին համար գործ գանէ և ան գործ չի կենայ:

Ինչպէս յառաջ ալ ըսինք, մեր պաշտօնն է (Ստուծոյ աւետարանն ու անոր փրկաւէտ օրէնքները քարոզել հաւատացելոց և անհաւատոց, ուսուցանել զնոսա, մխիթարել, քաջալերել, յանդիմանել, բժշկել զտկարացեալսն 'ի հաւատս և հաստատել, այս գործերու վերայ մտածող անկեղծ և հաւատարիմ պաշտօնէին գործ չի պակիր: Այս շարունակ կը զբաղի սուրբ Վիրք ընթերցասիրելով, նախնեաց սոջամիտ վարդապետութեանց մէջ յածելով, որովք զաշխարհ աշակերտեցին. կը խոկայ ժողովրդեան վիճակին վերայ, անոնց ախտերը և մլնասակար հակամիտութիւնները կը նշմարէ, միշտ ժամանակին կը հասնի ախտից վերայ եւ դեռ հօտին մէջ չի ճարակած՝ դեղն ու դարմանը կը հոգայ, կը խնամէ կը կազդուրէ և կ'ուզէ, նա իւր հօտին մէջ կը ծաւալէ մտաց լոյս և անարատ վարուց կենսաբոյր անուշատութիւն, և այս ամենը կը յաջողի հեղութեամբ, խոնարհութեամբ, քաղցրութեամբ, սիրով և երբեմն աստուածային օրինաց նախանձախնդրութեամբը վառուած բորբոքած, ու չէ թէ կատաղի կրից բորբոքմամբ, ամբարտաւանութեամբ և անհատական վրէժխնդրութեան վատ ոգւով:

Սորա այնպիսի գործեր են, որովք շարունակ զբաղած կրնան լինիլ եկեղեցւոյ պաշտօնեայք, հովիւք և այն, — Տէր, Հայր սուրբ, Արքայան, Վերապաքի, Աննապաքի, Վեհափառ, — և այլն խոշոր անուններով փոքրիկ սպասաւորներն ու անպիսան ծառայիքը. բայց չի մոռնանք ըսելու որ այդ գործերով ըզբաղելու համար կամք և ձեռնհասութիւն կուզէ. նոցա սյժմեան անգործութեանց բուն պատճառն անձեռն-

հասութիւնն է, և եթէ ձեռնհասներ ալ կան ամբարտաւանութեամբ կամք և յօժարութիւն չունին, քանզի կը կարծեն, որ իրենց վեհութիւնն ու փառաւորութիւնը անգործ ու դատարկ բազմելով կը լինի, կամ ժողովուրդեան մէջ շքեղ և ահաւոր երեւնալով, որ խիստ սխալ է և թերամտ ողորմելիներ ու սնտախ կարծիք, քանզի իրաւ է, որ ժողովուրդը շատ անդամ այդպիսի չնչին երեւոյթներէ կը շանայ, բայց այնչափը հերիք չը սեպեր, ամենէն տկարամիտն անգամ երբեմն կը դատէ, ու կը դատասպարտէ, շատ տեսիլներ, գործեր և փառքեր կարող են ժողովուրդը զարմացնել, բայց չեն կարող նորա ուշքն ու սիրտը միանգամայն գրաւել: Վարտաւոր ենք յիշել, թէ մենք այս պաշտօնին մէջ չի մտած ի՞նչ կը լսէինք և ինչ կը խօսէինք անգործ և դատարկասուն պաշտօնէից վրայ, և կամ ընդհանրապէս ի՞նչ կը պահանջէինք եկեղեցւոյ պաշտօնեայներէն, անշուշտ նոյնը և ալ աւելին պիտի խօսին մեր վրայ և պիտի պահանջեն մեզմէ, քանի որ մենք նախապէս արդէն եղածներուն չէինք հաւնիր և կանոններ կը տայինք նոցա:

Ժողովուրդն զմեզ անգործ կուռքեր չինելու համար չէ, որ կը որոշէ, կ'ընտրէ, և երկրաքարչ վիճակէ մը կը հանէ կը բարձրացնէ և իւր վերայ հսկող կը դնէ. այլ հարկաւ ակնկալութիւն մի ունի, տկարութիւն մի, կարօտութիւն մի ունի, և անշուշտ կըս պատէ, որ մեր գործունէութեամբը լեցնէ իւր կարօտութիւնը, ակնկալութիւնը և զօրացնէ իւր տկարութիւնը, գոհ և ուրախ լինի իւր վիճակին մէջ, խաղաղ և մխիթարեալ լինի ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, և ահա այն ատեն կականածի, այն, կը փառաւորէ, և կը սքանչանայ:

Սակայն այս ակնածութիւնն ու յարգանքը ներսէն, սրտէն, հոգւոյն մէջէն կուգայ և հաճոյք ու բերկրանք կաութէ, այս ակնածութիւնը ՚ի Հայրական քաղցր սիրոյ և յերախտեաց աղագած կը լինի որ ամենաքաղցրն ու ամենասիրելին է, և չե թէ ՚ի բռնական խրոխտմանէ և անխիղճ հարստահարութենէ, զրկանքէ և կեղեքումէ, որուն սկիզբը երկիւղ, տալնասպ և սըրտի վրդովումն ու վախճանը վրէժխնդրութիւն և հատուցումն է. . . .

Ս. յ. Հարք, գործելու կոչուած ենք, չէ թէ դատարկութեան, գործեր յանձնած է մեզ Ստուած, և ժողովուրդը. Ժրութիւն և արթնութիւն կը պահանջէ մեզմէ Վարձրեալը, օգնութիւն կ'աղաղակէ ժողովուրդը, ինչ չի տակաւին անշարժ և խուլ կըմնամք այս անդիմադրելի պահանջմանց և հըզօր ձայնից առջեւ, որք կարող են իւրենց հատուցումը փութացնել. մին իւր փառաց անարգութեան և միւսը իւր յուսոյն ՚ի դերեւ ելնելուն համար:

Ս. ր էք, Հովիւք Հայոց, զձեզ փնտռող թշուառն ուր պիտի գանէ, մէկերնիդ սենեակնիդ քաշուած ցերեկ ատեն կը ննջէք և պատուիրած էք, որ քովերնիդ մարդ չի մտնէ. բայց դու գործ ունիս, եկող խեղճին խնդիրն ստի պողական է, կամ հոգւով և կամ մարմնով վտանգեալ է քու հայրական օգնութեանդ դիմած է, եթէ դու զքեզ կը պահես, նա որո՞ւ դիմէ. այլ քու հոգի չէ. խորդա՞ ուրեմն դու՞ քեզ համար այդ վտանգաւոր քնոյն մէջ. քու վտանգդ ալ Ստուածոյ և ժողովուրդեան հոգը պիտի չ'լինի, դուն ալ քու կարօտութեանդ օրը լքեալ պիտի մնաս. . .

Ս. րիշ մը իրեն անձին անվայել շքեղութեամբ զարդարուած գեղանրկար և ոսկեզօծ կառքի մը մէջ պինդ կոթնելով հարուստի մը թեւին նրու

տած է ահաւոր կերպով, սրարշաւ նը
 ժողովները արագութեամբ կը քաշեն
 կառքը, աղքատը կամ յառաջուց կը
 ահաճելով, կամ հեռիէն նշմարելով, որ
 իւր բարեխնամ Հայրը, Աստուծոյ կող-
 մանէ կարգուած իրեն անտեսը այն
 կողմէն կ'անցնի՝ ճանապարհին վերայ
 գանգնած, ճիտը ծռած ձեռները բա-
 ցաց կողկողագին կ'աղերսէ, բայց
 Հայր, դու գիտես ինչ կ'ընես, մի
 կարծեր որ թաքուն կը մնայ, գիտես
 քեզ աղերսող զաւկիդ դէմ ինչպէս
 կը վարուիս. — Ահ, երեսդ կը դարձը-
 նես, որ չի տեսնես քովինիդ հետ խօս-
 քի կը բռնուիս, որ այդ քու սրտիդ
 ատելի տեսարանն անցնի, և այն խեղճը
 խաբուի և կարծէ թէ չ'տեսար և քու
 վրայ միշտ նպաստաւոր յուսով ապրի,
 առանց որ մը իւր անխաղաղութիւնը պսա-
 կուած տեսնելու. բայց գիտցիր որ քու
 այդ փառքիդ մէջ յայնժամ խիստ ցած
 ու նուաստ երևոյթ մի ունիս, պժղալի է
 այդ ժամանակի քու տեսքդ նողկալի և
 արհամարհելի ես ամենուն, ամօթ է
 Հայր, այդ չէ քու գործդ . . . :

(Թշուառ, տգէտ և հարստահա-
 րեալ ժողովրդեան մը վերայ կարգուած
 հովիւ մը գիտեմ, որ թէպէտ երիտա-
 սարդ և կարճահասակ էր, թէպէտ բը-
 նութեամբ աշխոյժ, վառվռուն և գոր-
 ծունեայ էր, և իւր յախուռն համար-
 ձակութեամբը եթէ ուզէր շատ բար-
 բարոս հարստահարիչներ կը սոսկալը-
 նէր ու զսպել կուտար, սակայն իւր
 այս յատկութիւնքը չարաչար ՚ի գործ
 դնելով խաբէբայութեամբ և հայհոյիչ
 լեզուով չիկայ տեղ մի ուր նա իւր դի-
 ւական ոտքերով կոխած լինի և գայ-
 թակղութեան հետք մը թողած չը լի-
 նի: Այս անարժան անձին կեանքը հա-
 մարեայ թէ չարեաց շղթայ մի է որոց
 և ոչ մէկը արժան կը համարիմ այս
 տեղ յիշել, բայց միայն ինձ ըսած մէկ

խօսքը, ուրկէ կրնայ հասկուել իւր
 զգացմունքը: Մի օր երբ իւր առաջ
 նորդարանի բակին մէջ կը շրջէինք, այս
 անձը պանծանօք իւր քաջագործու-
 թիւնները կը պատմէր ինձ, առանց
 միջոց թողու, որ դիտողութիւն ընեմ.
 Բայց իւր պատմութեան վերայ ինքն
 սքանչացած, մէկէն սրտանց բացա-
 գանկելով մի սա խօսքերն ըսաւ, — «Այս,
 ափսոս չէ ինձ նման քաջասիրտ մէկու
 մը, որ այսպիսի անկիրթ ժողողրդեան
 մը մէջ աննշան կեանք մը կը վարեմ,
 եթէ ես Պօլիս ամիրայի մը տուն դիա-
 ֆէթի երթամ, փառաւոր պատիւ, հա-
 մադամ կերակուրներ կը վայելեմ և լի-
 ուսմ'ալ փշիլբասի կառնեմ. բայց ափ-
 սոս, իմ յարգս չեն գիտեր», ըսաւ և քո-
 վէս սահեցաւ առանց ժամանակ թողու,
 որ բան մի ըսեմ, թէպէտ ես ապշած
 կեցած էի, չէի հաւատար ականջիս,
 որ այսչափ պանծալի գործեր ընողն
 այսպիսի նուաստ անխաղաղութիւն ու-
 նենայ: Արդ ինչ կարող է յուսալ ժո-
 ղովուրդ մի իւր առաջնորդէն երբ այս
 պիսի սիրտ կը կրէ և դեռ չ'գիտեր թէ
 ինչ է իւր կոչումը, իւր անձին նշա-
 նակութիւն տալ կուզէ և ամիրայի մը
 թեկն տակ սմբիլ կը ցանկայ, ինքզինքը
 քաջ կ'անուանէ և գործելու ատպա-
 րիսէն խոյս կուտայ, մինչդեռ հազա-
 րաւոր ժողովուրդք իւր շուրջը բող-
 բած իրեն յարած են (քանզի դեռ
 նոր էր և յաջողած էր խաբել): Աւր
 փառք, պսակ, անմահական պատիւ,
 մշտնջենաւոր յիշատակութիւն իւր
 շուրջը կը թռչտին եւ ոտից ներքեւ
 կը թափին, ինքը շացած դէպ ՚ի
 Առտորի ափուկքը աջոյն մէջ սեղ-
 մուելիք ոսկոյն կը հայի և բերնին
 ջուրերը կը վազէ: Այիսն քեզ որ այն
 փառաց ու անմահութեան կեանքը ան-
 նշան համարելով՝ զրկուեցար և բոլը-
 բովն մասնուեցար իրօք աննշան կե-

նայ, սակայն երանի՛ այն ժողովուրդեան
 և Հայոց ազգին, որ քեզմէ ազատե-
 ցաւ, քանզի բարեբաղդաբար ալ
 պոչածոնեայ չես. և երանի՛ թէ բնու-
 եղած չըլլայիր, որ քու անխայել գոր-
 ծոցդ պատճառաւ եղած գայթակ-
 ղութիւնները տեղի չէին ունենար,
 և որչափ մեծ երջանկութիւն էր ազ-
 գին եթէ քեզիպէսներն ալ քու բաղ-
 դիր հանդիպէին:

Տակաւին ո՛ւր կը գտնուիք, Հարբ.
 քործը ու շքեղազարդ ազարաններու
 մէջուր աղբատը չէ կորող մտնել: քան-
 զի դրան սեւոց վրայ կոխելն անգամ
 պղծութիւն կը համարուի և թշուառը
 գանձակոծ կ'արտայտուի անկէ. հապա
 գնւ, ո՛վ պաշտօնեայդ եկեղեցւոյ, դու
 անօգնական թշուառին պաշտպանը,
 դու որո՞ւ համար զբեցած ես այդ ու
 բոշեալ ձեւդ, ինչո՞ւ մտեր փակուեր
 ես այդ տեղ, դու գործ չունիս. Այս,
 կ'ըսէ, գործ ունիմ,

- Եւ ի՞նչ է գործդ.
- Հիմա նարա կը խաղամ, յաղ-
 թելու վերայ եմ, միտքս մի շփոթէք.
- Բայց Հայր՛ այդ քու գործդ չէ...
- Քիչ մը ետքը ազային հետ ըզ-
 բօնելու ալ պիտի երթանք.
- Բայց պաշտօնդ դքեզ կը կոչէ.
- Ա՛յ, հիմա խօսելու ժամանակ
 չունիմ, ըսինք ես:

Ախտն, դեռ այդ տեղումնքը կը
 դեգերիք, անձնարան՝ Հովիւներ, դեռ
 ձեր կոչման վերադառնալ չէք զիջանիր,
 տակաւին այսչափ ազգեցութեան փու-
 ղերը ձեզ լսելի չեղան. չէք տեսներ
 որ Տիրոջ ահաւոր սուրը պատենէն
 երած է, և ձեր ու ձեզմով ալ ժողովը
 դեան գլխուն վրայ թերաբամ կը կե-
 նայ: Հովիւք եկեղեցւոյ, մեր մեղաց
 համար ժողովուրդը կոտորածի մատ-
 նուած է, մեք հովիւքս մեղանչած
 եմք, անմեզ ոչխարաց կոտորածը մեր

սիրտը տակաւին չի՞ պիտի շարժէ,
 ախտն . . . :

Անգործ հովիւներ, եկեղեցւոյ
 փառքն ու պարծանքն ըլլալու տեղ ին-
 չո՞ւ նախատինքն ու անարգանքը կը լի-
 նիմք. եթէ մեք զայն անարգելու չենք
 խղճեր, միթէ շատ բան է որ նա եւս
 զմեզ անարգէ, մեծ պատիժ մը տուած
 կը լինի երբ նախատանօք անպատիւ
 կ'ընէ զմեզ. Այս, խիստ մեծ է, խիստ
 անտանելի է այս՝ զոր մեք կը կրեմք,
 բայց բաղդատելով մեր իրեն հասու-
 ցած վշտին, տակաւին նա խիստ գը-
 թութեամբ կը վարուի, մեղմ է դեռ
 իւր խրատու հարուածը, որով եթէ
 չգգաստանամք ու տակաւին անհոգու-
 թեան, անգործութեան և անտարբե-
 րութեան մէջ մնամք, գուցէ աւելի
 չարագոյնը գործադրել ստիպուի ի-
 բրաւամք: Արեւմտ Հարբ իմ, գոր-
 ծել պէտք է որ անբասիր մնամք.
 գործել պէտք է, որ Արբազան Առա-
 քելոյն և ժրաջան մշակին պէս ըսելու
 կարող լինիմք, « Գործ իմ դուք էք
 ՚ի Քրիստոս . . . »: Գործել պէտք է
 որպէս զի Աստուծոյ ժողովուրդը իւր
 սահմանուած սրբութեան մեծու-
 թեան և փառաց հասնի: Ա՛յ, որչափ
 սրտառու է Առաքելոյն սա խօսքը,
 « Վերստին երկնեցից մինչև նկարեացի
 ՚ի ձեզ Քրիստոս »: Արդարեւ գործել
 պէտք է, միանգամայն Աստուծոյ ժո-
 ղովուրդն Աստուած ծնանելու համար
 երկուեք կրել պէտք է:

Սթիթէ ծանր բան է, որ մեր պար-
 աուց պահանջածը գործենք, ո՛չ, այդ
 բան մի չէ, մեք սրսրտաւոր ենք գոր-
 ծել, եթէ հարկն ստիպէ մինչև ան-
 գամ ապրելու համար ձեռագործ մը,
 արհեստ մը ունենալ և գործել հաց
 ձարելու, ժողովուրդեան վրայ չի ծան-
 բանալու և աշխատութեան մէջ ալ
 անձամբ օրինակ լինելու համար: Աւշա-

դրուածիւն դարձնենք անգամ մի Առաքելոյն հետեւեալ խօսքերուն եւ տեսնենք թէ ի՞նչ սուրբ վատահոլութեամբ և խղճի քաղցր հանդարտութեամբ մը կը խօսի. «Վրպէս դայեակ մի որ սնուցանիցէ մանկունս, նոյնպէս և մէք գթայաք ՚ի ձեզ, հաճոյ թուէր մեզ տալ ձեզ, ոչ միայն զաւետարանն Աստուծոյ, այլ և զանձինս մեր. քանզի սիրելիք մեր եղէք: Յիշէք եղբարք ըզվատատակն մեր և զՔան. զի զայոյ՜ և զԵրեի՜ գործէսք վասն ջանքանալոյ ումէս ՚ի յէջ և քարոզէաք ձեզ զաւետարանն Աստուծոյ. դուք ինքնին վիայք էք և Աստուած, որպէ՛ս սրբութեամբ եւ արդարութեամբ եւ անբժուութեամբ ձեզ հաւատացելոցդ եղեսաք»: Աւրիշ տեղ մը նորէն կ'ըսէ. «Վուք ինքնին գիտէք զի զպէտս իմ և որոց ընդ իսն էին պաշտօնիս յերեսս այս»:

Կը տեսնէք, Առաքեալը իւր անձն անգամ չի ինայեր, իսկ մէք ժողովը դեան հոգւոյն կերակուրն ալ կը խընայենք. որպիսի պարզութիւն, ի՞նչ անկեղծութիւն և ճակատաբաց համարձակութիւն է Առաքելոյն որ գիշեր ու ցերեկ աշխատեցայի՛րսէ, ձեզմէ մէկուն վրայ չի ծանրանալու համար: Վարուս մէջ կը գտնուի արդեօք մէկը որ ժողովրդեան վերայ ծանրացած չը լինի և որ զժողովուրդը սիրած ու ժողովրդէն սիրուած լինի. այս չըլլալէ զատ ցաւալի է, որ կղեր բառն առակ նշաւակի եղաւ հրատարակի մէջ, յաւճթ անարգելոց՝ և յանարգութիւն անարգողաց, ՚ի նախատիմա ներկայիս, ՚ի սարսափ և ՚ի զղուանս աղագային: Այսօր հազուադիւրս կը համարուի եւ կեղեցւոյ պաշտօնեաց մի որ ամբաստանութեան ենթարկուած չը լինի. այնու ամենայնիւ ժողովուրդը իւր կարօտութիւնը կը զգայ, դարձեալ զմեզ կ'ընդունի, զմեզ կը խնամէ, կը կերակրէ

և մեր պէտքերը լի ու լի կը հոգայ, առանց կարօտութիւն թողելու, որ մէք ձեռագործով զբաղինք. իսկ մէք առանց գործելու կը դիզենք կը կուտակենք ժողովրդեան արիւնն ու քրտինքը. ս'հ, և ի՞նչ սրտով, ի՞նչ խրոջձով պիտի վայելենք այն սնունդը, զոր ժողովուրդը շատ անգամ կը տայ, առանց բան մը ընդունած լինելու. ի՞նչ բարբարոս և անագորոյն սիրտ է այն և ի՞նչ վայրենական անմարդասէր ըզգացումն է, որ չբաւոր ժողովրդէն պահանջէ իւր պահանջքը իբր իրաւունք, իսկ իւր հոգեւոր պարտուց մէջ թերանայ, իւր հովուութեան գործը, ուսուցչութեան պաշտօնը, խնամակալութեան հոգն ու տքնութիւնը և մատակարարութեան աշխատութիւնը երեսի վրայ թողած քնով և անպատշաճ խողերով պարապի: Ինչպէս սնունդ պիտի ստանայ մարդ այդպիսի անարդար վատակէ մը, սրջափ մեծ չարիք է և անթողլի յանցանք, երբ մէկը աղքատին հացը յափշտակէ, մանաւանդ երբ նորա տեղ ուրիշ բան մի չի գնէ, որ այն թշուառին քաղցր յագեցնէ. պէտք է գիտնաք որ նոցա մէկ կ'աթիլ արտասուքը ձեր բոլոր գոյութենէն աւելի արժէք ունի, անմեղին հառաչանաց մօտ ամբարիշտ պաշտօնեաց մի (ինչ աստիճանէ ալ որ լինի) դիւրացնելի փոշի է: Ա՛նք ի՞նչ իրաւամբ, որ արդարութեան օրէնքով առանց աշխատելու պիտի ուտենք, բանի որ չաշխատողին հաց չի կայ. ի՞նչ է մեր առաւելութիւնը կամ արժանիքը որ նա աշխատի և զմեզ կերակրէ, հոգայ և խնամէ. յիրաւի մեծ է մեր արժանիքը, անչափ է մեր առաւելութիւնը. բայց մեր պաշտօնին մէջ գործելով, ու չէ թէ փափկութեանց մէջ յորանալով արդեամբ, ու չէ թէ բանիւ լսկով, այնպէս որ առանց մեր գործոց քա

րողը մենք լինելու կամ ցածութեամբ խարտաւիղակներ որսալու, ժողովուրդքն ինքնին զգայ, ճանչնայ եւ սիրով ու կամօք տայ ինչ որ պիտի տայ, տուածը տուգանք չի համարի, այլ տալու ատենն հաճոյք զգայ. բայց հիմայ երկիւղած պաշտօնեայ մը ժողովուրդէն բան մը առնելու կը խղճահարի, քանզի գիտէ թէ դժգոհութեամբ պիտի տան, վասն զի ծանր բեռներու պէս եղած են կրօնաւորք իրենց անգործութեամբը, ո՞րչափ աղետալի է այս վիճակը, յորում կը տագնապիմք այսօր. ինչէր կը խօսի ժողովուրդը երբ առաջնորդ մի պտղի ժողովելու կ'ենէն, ի՞նչ մեղքեր ինչ հայհոյութիւններ 'ի պատճառս մեր անհոգութեան կը գործէ ժողովուրդը, երբ տաներեց մի սահմանեալ ժամանակներ իւր ժողովուրդին այցելութեան երթոյ կամ երթալ դառնալէն վերջը. մարդու սիրտ չը վերցնէր մանր նկարագրել և զգայուն սրտեր չեն կարող առանց մեծ վիտի լսել, ըսածներուս բոլորին ալ ներկայ օրինակներ ունիմ բայց անձնականի չգպշելու համար ընդ աղօտ անցնիլը լաւ է :

Սեղմէ ո՞ր մէկը պիտի կարողանայ համարձակ և ճշմարտութեամբ ասել թէ գիշեր ցերեկ աշխատեցայ և մանուկ սնուցանող դայեկի մը պէս ձեր վրայ գութ և սէր ունեցայ և կամ որ՞ն համար պիտի կրնանք ասել թէ «Քրիստոսով իմ գործս դուք էք » : Ի՞նչ անոյշ վստահութիւն, ի՞նչ երջանիկ ակնկալութիւն է որ սրբազան Առաքելոյն հոգին կը տածէ և ինչ սնկեղծ ու խղճի կատարեալ հանդարտութի է, որով կը համարձակի ասել. «Օ ընթացան կատարեցի, զհաւատան պահեցի, այսուհետեւ կայ մնայ ինձ արդարութեան պսակն » : Թող ամեն պաշտօնեայ ինքնիրեն գայ, խորհի, իւր

կեանքը անաչառապէս քննէ, պիտի կարողանայ արդեօք անկեղծ վստահութեամբ ըսել հաւատարիմ աշխատող պաշտօնէի մը բերնին արժանաւոր այս խօսքը : Սակայն եթէ համարձակի մէկն ըսել, չէ որ իւր անարժան գործոց ցանկը 'ի յանդիմանութիւն իր կեղծ ու պատիր խաբէութեան իրեն պիտի կարգացուի. իւր կոչմանն արժանաւոր ընթացքի մէջ չի գտնուիլը երեսը պիտի զարնուի. իւր ծուլութիւնը և անհոգութիւնը իրեն դատաւոր պիտի լինի, և իրեն յանձնուած հոգաբարձութեան կամ տեղը մնալը կամ անկարգ խառնաշփոթութեան մէջ լինելը իւր ստութիւնը պիտի խայտառակէ, անոր համար չի պիտի կրնայ վստահիլ գէթ ըսելու թէ՛

«Պառայք անպիտանք եմք, զոր ինչ պարտն էր առնել՝ արարաք » : Ինչո՞ւ, — վասն զի պարտք եղած բանէն բան մի ըրած չէ, այլ ամեն պէտք եղածները երեսի վրայ թողած է անհոգութեամբ, որուն համար այսպէս կը խօսի Յովհան վարդապետ. «Քանզի արտաքոյ իրաւանց է և անտեղի բոլորովին, ոչ ըստ արժանի իշխանութեանն գնալ կոչման, կամ պղերգաբերիլ, և թերահոգ առ դնել յոր հաւատացաւ հոգաբարձութիւն նմա » :

Եւ արդարեւ անտեղի է, չը գործել և ասլիլ, իրեն յանձնուած պաշտօնը հաւատարմութեամբ չի կատարել, և տակաւին բաղբաղանօք մարդկանց մէջ երեւելու համարձակիլ. չը գործել, արդիւնք չը տալ և իբրեւ յափշտակիչ այլոց վաստակն ուտել, ի՞նչ կրնայ անուանիլ այսպիսի գործ և գործող մը, թերեւս խիստ դատած չենք լինիր երբ գործը ոճիր և գործողն եղեւնագործ անուանենք, բանզի այն պիտիք ուրիշ անուն չունին : Սի վըտանաք պաշտօնակիցք իմ, դեռ ամենքը

չքսի և չըսիտի կրնամ բռնել, քանզի կը խնայեմ ձեր տկարութեանը՝ գիտնալով որ չը պիտի կրնաք տանիլ : Թուղունք ուրեմն որ Առաքեալը իւր միւս վտահուութիւնն ալ պարծանօք յայտնէ, և ինչպէս Թեոսաղոնիկեցւոց ստահակութիւնը կը յանդիմանէր, Թող իւր օրինակովն զմեզ ալ կշտամբէ, Թերևս ամաչէնք . « Եւ ոչ ձրի ուրուք զհաց կերաք , այլ ջանիւ և վաստակով ըզցայդ և ոյգերեկ գործէաք՝ վասն ճանրանալոց ումք ՚ի ձէնջ . ոչ Թէ չունէաք իշխանութիւն , այլ զև շնչիս օրինակս ուրացոյ » Եղ իմանող լինել Բեզ , քանզի մինչդեռ առ ձեզն իսկ էաք՝ զայս պատուիրէաք ձեզ , Թէ որ ոչն կամիցի գործել , և կերիցէ մի » .


Կը տեսնէք , պատուական Հարք , որ սրբազան Առաքեալը իւր ունեցած իրաւունքը ամեն տեղ չի գործադրեր , իւր իշխանութիւնը միշտ չի բանեցնէր միանգամայն և իւր պատուիրածը օրինակով ցոյց կուտայ կը գործէ եւ գործել կուտայ , և ահա այս է Վրիստոսի ճշմարիտ աչակերտին մէկ յատկութիւնը , առնել և ուսուցանել . այս տեղն է իւր մեծութիւնը , « Եւ որ արասցէ և ուսուցէ , նա մեծ կոչեսցի » : Արով ՚ի պահանջել հարկին կարող կը լինի նոցա ստահակութիւնը սանձել . և ահա ասկէց յայտնի է որ ինչու մեր ժամանակի ժողովրդականք անուղղայ կը մնան և ինչ է մեր անհամարձակութեան սրտաճառը , որ չենք կարող նոցա գործերը երեսնին զարնել , յանդիմանել և ուղղել . քանզի կը տեսնեմք , որ նոյն յանցանօք մեղսակից եմք այնմ , զոր կը յանդիմանեմք , և երբ փոխադարձ անկէ ալ կը յանդիմանուինք իսկոյն կը խուսկնք , սրտերնիս կը վշտանայ և իբր Թէ եթէ նա չիխօսէր կամ Թաբուն մնար մեր յանցանքը , մենք յանցաւոր չի պիտի համարուէինք . այս

յիմարական ջնորքով նոցա զմեզ յանդիմանելը անարգանք մը և իբր եղև նական մատնութիւն մը համարելով անզուսպ և անհանդուրժելի բարկութեան կրիւք վարակեալ կատարութիւն կը խօսիմք և ալ անձնական վրէժխնդրութեան կը դարձնեմք գործը , որով նորա հոգին կը վիրաւորեմք , քան Թէ կը բժշկեմք չար օրինակ կը լինիմք քան Թէ յուղղութիւն կ'աճեմք . ուստի գիտնալով որ մեր ապարդիւն խօսքը ազդեցութիւն պիտի չունէ , սկսած ենք շատերնիս անարգ ցածութեամբ մեր կիրքերն ու կամքերը պաշտելու համար ժողովրդեանն ալ շղեղ , ըրածը պատուութիւն չի համարիլ , սուտ ու փուտ պատճառաբանութեամբ արդարացընել , որ նա ալ մերինն աչք գոցէ . շատ անգամ ոմանք կրօնաւորք իրենց ստութեան , չարութեան եւ խարէութեան գործիք կ'ընեն ժողովրդական մի , որպէս զի իրենք արդարանան . և ահա այս ցաւալի վիճակին մէջ է եկեղեցւոյ պաշտօնեութիւնը . մինչեւ անգամ պաշտօնեայ մի եթէ երնէ ատեան և ժողովրդեան մէջ տեսնուած պակասութիւններն պարզմտութեամբ յայտնէ , ոմանք ուղղակի իրենց վրայ առնելով , փոխանակ զըջալու և շնորհալի լինելու , կը ցաւին քարոզէն և զինքը փոխել կուտան , և կամ ՚ի պատճառել զպատճառս մեղաց ընելով , այս ինչն ալ կ'ընէ , գուն ալ կ'ընես կ'ըսեն . ցաւալի է այս արդարեւ , բայց պատճառ նոյն իսկ պաշտօնեայք են :

Ենչ պիտի յուսայ այն պաշտօնեայն որ եպիսկոպոսանալու համար իւր վը կայսկանն ինքը կը գրէ և զինքն Յիսուս Վրիստոսի հետ բաղդատելով նորա նման և հաւասար կը համարի , իբր Թէ իւր երկնային քարոզութեամբն եւ լուսաւոր վարդապետութեամբը անհաւատներն ու անկրօնները ՚ի լոյս

ատուած գիտութեան դարձուցած է, իբր թէ իւր եղած տեղերէն հոգեւոր ու մարմնաւոր ախտերը հալածական ըրած է, և վերջապէս ինչ որ ըրած էր Յիսուս՝ գուցէ բան մի ալ աւելի ինքն ըրած է, (միայն խաչուիլը և յարութիւն առնելը կը մնայ գուցէ այդ ալ եպիսկոպոսանալէն վերջը կատարելութեամբ սրահած է) :

(Շարունակելի է)




**ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆՈՒԹԻՒՆՔ
Ի ԼԵՍՈՒՆ ԶԻԹԵՆԵՍՅ**

Ասկէ յառաջ Սիօնի միջոցաւ ծանուցինք թէ՛ Չիթենեաց լերան արեւելեան կողմն Սուսաց ազգին գնած արտին մէջ Հայկական հնութիւններ կը յայտնուին, և խոստացած էինք յայտնուածները հետ զհետէ ծանուցանել ՚ի գիտութիւն հետախոյզ հընասիրաց Ազգիս՝ հաւաստի բացուած տեղերուն նկարագրութիւնը, զոր աստ մանրամասն կը ստորագրեմք: Սուսաց նոր շէնքին փոքրիկ դահլճին ամբողջ յասակը մանր եւ դոյն դոյն մոզայքներով եւ սքանչելի պատկերներով զարդարուած է, այնքան ըսքանչելի, որ զգայուն սիրտ կրող ճրչմարիտ Հայ մի տեսնելով, առանց արտասուաց կաթիլներ աչքէն թորեցընելու կարող չէ սնցիկ, մանաւանդ եւ թէ փոքր ինչ ճաշակ ունեցած լինի իւր նախնեաց փառաց և պերճութեանց վրայ: Այս մանր և դոյն զգոյն մոզայիք վեճ նկարները այնպիսի գեղեցիկ յարմարութեամբ և ճարտարագործ արհեստիւ շարուած են, որ դոյները և ստուերները կարծեմ թէ դարուս ա-

նուանի պատկերհաններն իրենց վերջիններով և ներկերով չը պիտի կարողանան այնպէս յորինել, թող թէ մանր քարերով շարել: այլ աւանդ, դարուց և ժամանակաց ողբալի դառնութիւնը հազիւ թէ յիշեալ ամբողջ սենեկինը կարներուն քառորդ մասը թողուցած է: Տարակոյս չկայ թէ նոյն ամբողջ քառակուսի ընդարձակ սենեկին նկարուց մէջ, արդի տեսնուածներուն հետ, կային նաև այլ և այլ նկարներ և պատկերներ և արձանագրութիւններ, այլ դժբաղդեմք որ քանդեալ և ապականեալ է, թէ և անկեալ և խախտեալ բեկորները Սուսաց վանահայրը ժողովելով իրար յարմարցնել կուզէ, սակայն բան մի չը գուշակուիր: Սնայ մեզ արդ յայտնի տեսնուածները ըստ կարի նկարագրել: Այս ամբողջ մնացած մասին հիւսիսային կողմն, մէջ տեղը ձերմակ գառնի մի կանգնած է և գլուխը դէպ ՚ի վեր բռնած, գլխոյն վերի կողմը հսկայապ շինուածքի մի կամար կը տեսնուի սքանչելի յորինուածներով, նոյնպէս ոտքերուն ներքեւ, բոլորակի մի մէջ կանգնած և թեւերը ամփոփած գեղեցիկ արծի՝ մի, բոլորակի մի մէջ սիրուն բար մի, որուն մաշկապատ ոտից յարմարումը հիանալի է: Արեք չրջանակի մէջ երեք հատ մեծամեծ յրկունք, իւրաքանչիւր չրջանակի մէջ մէկ մէկ հատ, թէ մեծութեամբ և թէ ձեւով իրարմէ տարբեր, որոց թեփերը, թեւերը և կազմուածոց ամեն պարագաները ամբողջ կը տեսնուին: Շրջանակի մի մէջ երկու ողորդ խաղողոց մէկ մէկ կանանչ տերեւներով: Այլ չրջանակի մէջ երկու սրբայե- պար- ղեր, (մեզ անձանօթ) և այլ մանր և սէսպէս յորինուածներ և խաչեր: Հիւսիսային կողմն լայն երեզի մէջ հին հայկական երկաթագիր խոշոր տառերով մի կարգ գրուած է այսպէս. « ԱՅՍ ԴԻՐ Է Ե-

ՐԱՆԵԼՈՒՅՈՒ ՀՈՒՇԱՆԿԱՆ ՄԱՒՐՆ ԱՐՏԱՒԱՆԱՅ , ՀՈՒՒ ԺՔ : Սոյն սենեկին ներքեւ ութը հատ քարաշէն ստուրերկրեայ գերեզմաններ կան , որ արձակ դռնով մի վար կ'իջնուի , որոց ու մանց մէջ տակաւին մեռելոց ոսկորներ կը գտնուին : Այր դահլճին հիւսիսաւրջին կողմն գտնուած սենեակը կը մրտնես , որուն դարձեալ յատակը մանր մոզայքներով յարդարուած կը անանուի , բայց առանց պատկերի և գրի , աստի կը մտնես արեւելեան կողմը սենեակ մի , դարձեալ յատակը մոզայք , բայց տակաւին մաքրուած չէր . սորաներքեւ ստորերկրեայ փոքր կ.քարաշէն այր մի որ քանի մի աստիճանաւ վար կ'իջնայ , նոյնպէս տակաւին անմաքուր , թէև բարաւորին վրայ հայկական տառեր կը նշմարուին բայց չկարգացուիր : Նոր շինուած շէնքին կից արեւելեան կողմն , բաւական մեծկակ այր մի , որուն հողերը մաքրելէն յետոյ վրան ալ քարուկիր շինուածով այժմ ծածկած են , ուր կը գտնուին տասն և վեց հատ քարաշէն առանձին առանձին գերեզմաններ , որոց հինգն իրենց միասնայլ և երկհատոր կափարիչներով տակաւին ծածկուած են . իսկ մնացեալները բաց և դատարկ , որոց խորտակեալ քարերուն վրայ մէկ կամ երկու հայկական տառեր կը նշմարուին . իսկ ամբողջներուն մէկին վրայ փորուած խաչ մի և քովն ալ գրուած է — ԶՈՁԻԿ , նոյնպէս միւսին վրայ խաչ մի , և եղծեալ և դժուար ընթեռնել տառեր , զոր հազիւ կարացինք կարդալ : ԱՅՅ Ե ԿԱՓԱՐԻՉ , որ թերեւս ուրիշ անուն լինի : Ասոր դըրան առջեւ բացուած է նաև փոքրիկ այր մի , որուն երեք որմոց վրայ երեք մեծամեծ խաչեր նկարուած են , հարաւային կողմինը ծեփը թափելով , միայն խաչին պատուանդանը կ'երեւի , իսկ երկուքն ամբողջ : Ասկէ քանի մի

քայլ հեռի փոքրիկ այրի մի մէջ (որ այժմ շինուած և ծածկուած է) դարձեալ մանր մոզայքներով գեղեցիկ յորինուած դամբարան մի բացուած է , որ այժմ մաքրուած վանդակով և դռներով պատասպարուած է , շիրմին վրայ մոզայիւք արձանագրուած է երկաթագիր տառերով հետեւեալը . « ԲԱՐԵՒԱՒՍ ՈՒՆԵԼՈՅՍ ԱՌԱՍՏՈՒԱԾ ԶՍՈՒՐԻ ԵՍԱՅԻ ԵՒ ԶԵՐԱՆԵԼԻ ՀԱՐՍՍ ԵՍԱՅԵԱՆՍ ԱՐԱՐԵԱԼՆ ԹՈՂՈՒԹԵԱՆ ՄԵՂԱՅ ԶՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՍ ԶԱՅՍ : Այս անձուկ տեղէն փոքր դռնեկով կը մըտնես հիւսիսային կողմն եղած մեծ այրն , որուն մէջ մեռելոց ոսկերք լեցուն են և դեռ մաքրուած չէ : Հողերուն և փրատակներուն ներքեւ գտնուած մոզայքները հաւաքած են , և բաւականաչափ կուտած են միանկեան մէջ . բայց յայտմանէ գտնուած են վեց հատ մեծամեծ ջրամբարներ , որ այժմ նորոգած են : Առ այժմ այսքանս բաւական համարելով , եթէ դարձեալ նոր բան մի գտնուի , կը խոստանամք հրատարակել , պատմական ծանօթութեամբ հանդերձ :



ԱՆՁՆՈՒԻՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Յ Ա Տ Ա Ն Ա

Ազգի մը յառաջագիմու թեան , զարգացման և բարգաւաճելուն ամենամեծ առիթներէն մին նաև ամենէն գլխաւորը հանրաշահ ընկերութիւնք լինելն անուրանալի է . իրաւ է որ շատոնց 'ի վեր մեր ազգին մէջ ալ շատ ընկերութիւններու խոշոր անուններ լուսեցան և նպաստաւոր յոյսերով ազգին սիրտը լեցուցին , բայց դժբաղդաբար նորա յոյսն ապարդիւն թողին , իրենք կորան եւ իրենց անունն ալ :

Մասնի անարդար եւ ասարդիւն ընկերութեանց յիշատակը կարող է վրնասել օգտակարներուն հաստատութեանն ու զարգացմանը, այնու ամենայնիւ բարեսէր և անվհատ սրտերը անկասելի իմն արիութեամբ յօգուտ ազգին և նորա մատաղ սերունդին կը մղցին տակաւին առաթուր հարկանելու այն ամեն խոչընդոտներն որք անձնական անարգ շահու բաղձանքէն թելագրեալ արգելք կը դառնան ազգօգուտ հաստատութեանց յարատեւութեան : Այսպիսի արիական մըրցման գովելի փոյթ մը կը տեսնուի Ատանայի ազգայնոց մէջ : Արդէն ուրախութեամբ լսած էինք Անձնուէր անուն ընկերութեան մը հաստատութիւնը և սրտագինս մաղթած էինք ու կը մաղթեմք միշտ նորա արդիւնաւոր յարատեւութեանը համար . իսկ այս օրերս հասած նամակէ մը բերկրութեամբ սրտի կ'իմանամք որ յաջողակութեամբ կը յառաջանայ նոյն ընկերութիւնը, և սկսած է օգտակար ձեռնարկութիւններու . իշխանք և ժողովրդականք սիրալիր համակրութեամբ ընդունած են սոյն ընկերութիւնք իւր խոհեմ ընթացքն և օգտակար առաջադրութեանցը համար . ուստի Սեպտեմբեր 24 երորդ օրը համակամ հաճութեամբ ժողոված են յեկեղեցին և հանգանակութիւն բանալով ստորագրած ու չափաւոր գումար մի գոյացուցած են, և տակաւին ալ կը շարունակեն . առ այժմ գոյացած արդիւնքը գործածելով փութացեր են Հայերէն, Վաղդիարէն եւ՝ Տաճկերէն լեզուաց դասատուներ բերելու համար Պօլիս գրել . կը յուսամք որ Րնկերութիւնը ազգասէր և աշխատասէր դասատուաց հանդիպելով իւր օգտաշար նպատակին կը հասնի եւ Ատանայի մեր ազգայնք ալ քիչ միջոցի

մէջ կը զարգանան ազգայնութեան փափուկ զգացմամբ, օգտակար գիտութեամբ և կրթութեամբ :

Արխեղբեմք Ատանայի մեր համագրի եղբայրներէն որ իրենց մէջ և բուն իրենցմէ ճնած այս բարի զաւակը, այս առաքինի ընկերութիւնը գգուեն ու խնամեն և քաջալերեն, քանզի իրենցմէ ճնած լինելով իրենցմէ պէտք է սընանի որպէս զի նա ալ իրենց ապագայ սերունդը անուցանէ :

Արքաջալերեմք Անձնուէր Րնկերութեան պատուարժան անդամներն ալ, որ չի վհատին իրենց մրցման ասպարիզին մէջ, արիութեամբ ջանան իրենց բարի նպատակին հասնելու, օրինակ ունենալով Պօլսոյ համանուն ընկերութիւնը և գիտնալով որ ամեն մեծ գործեր իրենց մեծամեծ դժուարութիւններն ունին, քաջութիւնը անոնց յաղթելն է : Աստօրեալ գուրսան ու ճշմարիտ փառքը գործոյն յաջող փոխձանէն կախումն ունի, այսպիսի գովեստից եւ այսպիսի փառաց արժանի լինելու համար իրօք անձնուէր լինելու է, անվհատ արիութեամբ, ճշմարտութեամբ և արդարութեամբ գործելու է . այն ատեն ձեռնտուութիւնք ալ չեն պակսիր :

ՃԵՄԸՆԵԿԵԳՐԸԿԸՆԻՔ

Մտոյս 5ին Օգոստոսիալ Սուլթանին ճնդեան տարեդարձին առթիւ գիշերը ճրագալուսութեան հանդէս կատարեցաւ :

— 8ին տեղւոյս Առաւիտարիչ Ասեմ Նազիթ Փաշան Երպրտէ ելնելով հետեւեալ օրը 9ին, երեկոյեան դէմքազարս հասաւ մեծ հանդիսիւ, և ընկերակցութեամբ պաշտօնաւոր և մեծամեծ անձանց, հանդերձ հիւպատոսաց թարգմաններով և Եասախձիներով :

- Այն օրը քաղաքս հասաւ Աւստ-
րիոյ Վօրդ - Սախի Պ. Հիւպատոսը
ուխտի համար և որ ամսոյս 13ին վե-
րագործաւ :

- 15 գիշերը ժամը 3ին Օլտեմյուր-
կի իշխանը քաղաքս ժամանեց Արին
մեծութիւնը ցամաքային ճամբորդու-
թիւն ընել չուղելով Պերութէն բաժ-
նուած էր Ա. Ի. Նիգոլա կայսերա-
զուն դուքսէն՝ որ կուղէր ցամաքաւ
գալ. այս առթիւ Յունաց Ս. Պատ-
րիարքը Նապլուս Կնաց Ա. Սեմու-
թիւնը դիմաւորելու. և հոն չգնելով
մինչև Նաղարէթ Կնաց, ուրկէ ընկե-
րանալով կայսերազուն իշխանին՝ ջրջա-
գայել ու զած տեղերը՝ Նապլուս, Յոր-
դանան և այլն ջրջելով ամսոյս 26ին ժա-
մը 8ին Ս. Արուսաղէմ մտան Արին
Բարձրութիւնը ինչպէս նաև Արի-
թէմյուրիկի իշխանը : Վիմաւորելու
փութացին տեղոյս կառավարիչ Ա.
Նազիֆ Փաշան հետեակ և ձիաւոր զո-
րօք, Տէրութեանց Հիւպատոսը, մեր
Ս. Պատրիարքը, քաղաքիս երեսը ան-
ձինք բոլորն ալ իրենց համադգեստովը :

Վեթսեմանի ձորէն քիչ մի վեր ըն-
դունելութեան համար վրաններ դր-
ուած էին. զինքը դիմաւորել գացող
ներն ըստ իւրաքանչիւր սատիճանի
պարտ ու պատշաճ յարգանք ընդ ու-
նելէն վերջը Արին Սեմութիւնը մեծ
հանդիսիւ քաղաքիս արեւելեան (պապ
իւ սպախ) սուրբ Արուսաճաճնի ըսուած
դրնէն մանելով եկաւ ու զղակի ՚ի սուրբ
Յարութիւն, Յունաց Ս. Պատրիարքը
հանդերձ միաբանութեամբ կրօնական
պատրաստութիւններով դիմաւորեցին
և նոյն հանդիսաւոր թափօրիւ բոլոր
ուխտատեղիքը շուրջ ամէլով տարան
՚ի Պատրիարքարան. և անտի Արուսաց
Հիւպատոսարանը Կնաց ուր իրեն հա-
մար օթեւան պատրաստուած էր :

Հետէւեալ օրը Համբարձման լեռն
ու Բեթանեայ ջրջեցաւ, գիշերը տե-
ղոյս հիւպատոսներն թեյի հրաւիրեց :
Շաբաթ առաւօտ Արուսաց վանքի մեծ
եկեղեցւոյն օժման հանդէսը կատարե-
ցաւ. հանդիսապետ էր Յունաց Պատ-

րիարքը և մատակարարար Ս. Խորհրդ-
դոց, Ս. Պատարագ ևս մատոյց յու-
նարէն եւ Արուսերէն երգեցողու-
թեամբ, ուր ներկայ էր Արին Սե-
մութիւնը համադգեստով Արին Սեմ-
դուքսը կիւրակի գիշեր Ս. Վերեզմանի
վերայ հաղորդուեցաւ, ուր պատարա-
գիչ էր Յունաց Պատրիարքը և մեծ
բազմութիւն ներկայ էր : Ս. Պատա-
րագի միջոցին Ս. Պատրիարքը կնաց
փայտի մասունք պարունակող խաչ մի
իւր ձեռօք կոխեց Վուքսին կուրծրը
Այն օրը առաւօտուն Արին Բարձ-
րութիւնը Բեթղեհէմ Կնաց, և վե-
րագործաւ, և քանի մի անձանց պա-
տուան շոններ շնորհեց Արին Բարձ-
րութիւնը ջր հաճեցաւ վանուցս այ-
ցելութիւն ընել, այլ աճապարանօք
երկու շաբաթի (30) առաւօտ ժամը 4ին
մեկնեցաւ քաղաքէս, ընկերակցութիւ
Յունաց Ս. Պատրիարքին, Արուսաց
Հիւպատոսին և բազմութիւ ձիաւոր
զօրաց, քաղաքիս Սեմ. կառավարիչն
ալ բաւական տեղ ընկերանալով դար-
ձաւ :

- Աստորդ թուով Յիսուսեան վար-
դապետի մը բողոքական լինելը ծանու-
ցինք, ամսոյս 20ին յիշեալ վարդապետը
տեղոյս ըստինաց պատրիարքական
փոխանարդին աղերսագիր մատոյց որ
զինքը վերստին ընդունին միաբանութե-
ն և քահանայից կարգը. խնդիրքն ընդ ու-
նեցաւ, բայց տակաւ ին պատարագ ելե-
արգիլուած է : Հաստատուն սկզբունք
չունենալ, կամ սկզբունքը կոյց զահել
ստեղծելու բան է, մարդն աստանդական
կը տատացնէ, կ'երեւի թէ այս անձը
չնին նպատակ մի ունէր, որուն հաս-
նելու համար բողոքական եղաւ, բայց
տեսնելով, որ չի պիտի կրնայ հասնիլ, և
հասկնալով որ ոչինչ է իւր խորհուրդը,
ստիպուած է դառնալ :

- Ամսոյս վերջերը սկսան անձրեք
առատութեամբ յաճախել, կը լսեմք
թէ Սար-Սափոյի կողմերը քանի մը
հովիւք իրենց ոգևորաց խմբովը դըժ-
բաղդաբար հեղհեղի յորդութեան
կուր եղած են :

Յ Ա Ն Կ

Հ Ո Կ Տ Ե Մ Ի Ե Բ

Ինքնուրույն կրթութիւնն իբրեւ առաջին խարխալ ընկերական շինութեան . (շարունակելի) .	217
Պաշտօնեայ և պաշտօնավարութիւնն .	222
Երկու խօսք Եկեղեցւոյ պաշտօնէից ուղղուած . (շարունակելի) .	228
Հայկական հնութիւնը 'ի լեառն ձիթենեաց .	237
Լ'նձնուէր ընկերութիւն յԱտանայ .	238
ՃԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ .	239

Բ Ա Ճ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Պ Ա Յ Մ Ա Ն Ք

- Ա. Սիօնը ամէն ամիս կը հրատարակուի 24 էրեօն բաղկացեալ մեկուկէս
ութածալ թղթով :
- Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Մէճիտիցէ : հանդերձ ճանապարհի
ծախքովը կանխիկ վճարելն :
- Գ. Զատ տեարակ առնել ուղղը : պէտք է ամեն մեկ տարին շրտ դա-
հեկան վճարել :